

ՊԱՏՄԱԿԱՆ

S. S. ՎԱԶԳԵՆ Ա. ՊԱԼՃԵԱՆ (1955-1995)

3591. ԱԼԽԸՆԹԱՑԼ

Մեր պատմութեան ընթացքին քանից յիշած էինք ոռումասնահայ երիտասարդ ուսուցիչ Լեւոն Կարապետ Պալճեանը, որ արդինաւոր վաստակ ունեցած էր որպէս կրթական մշակ (3382): Ապա, 1943 թուին, կուսակրօն քահանայ ձեռնադրուելով, Վազգէն վարդապետ Պալճեան, վարած էր նախ առաջնորդական տեղապահի եւ ապա առաջնորդի պաշտօնները իր ծննդավայր Ռումանիոյ հայոց թեմին (3518): Վազգէն եպիսկոպոս, իր քահանայական ձեռնադրութենէն 13 տարի, եւ եպիսկոպոսական ձեռնադրութենէն 4 տարի ետք, 1955 մեպտեմբեր 30ին կը բարձրանար Ս. Լուսաւորչի Գահը, 47 երիտասարդ տարիքին, հայոց հայրապետներէն մին: Լեւոն Կարապետ Պալճեան ծնած էր Ռումանիոյ Պուլքիչ յայրաքաղաք 1908 թուականի մեպտեմբեր 20ին, Ռուսոսթոցի Աբրահամ Պալճեան եւ Էտիրնեցի Սիրանոյշ Մարգարեան ամոլի յարկին տակ, որպէս միակ զաւակը, եւ երրորդ օրն իսկ, սեպտեմբեր 23ին մկրտուած Պուլքիչ Ս. Հրեշտակապետք աթոռանիստ եկեղեցւոյ մէջ՝ Յարութիւն քահանայ Մարգիսանի ձեռամբ (ՎԱԶ. 9): Մանկութեան կարճ ատեն մը Կ. Պոլիս եւ Ռուսոսթո այցելութենէն ետք, 1917 ին Պալճեան յաճախած է Ռուսայի հայկական նախակրթարանը, հայզգի մտաւորական Արմէն Շիտանեանի տեսչութեան ներքեւ, եւ տարի մը ետք ծնողաց հետ Պուլքիչ վերադառնալով իր նախակրթութիւնը շարունակած է գերմանական աւետարանական դպրոցէն ներս մինչեւ 1924, երբ կը ստիպուէր թողուլ դպրոցը «ուսման վարձը խիստ թանկ» ըլլալուն պատճառաւ (ԱՆԴ. 20), ու կը մտնէր մայրաքաղաքի առեւտրական բարձրագոյն վարժարանը, միանգամայն արձանագրուելով Հայ Մարմամարգական Ըսդհանուր Միութեան. «եռանդուն մասնակցութիւնը բերելով այդ մասնակի աշխատանքներին» դառնալով նաեւ Միութեան ատենապետը (ԱՆԴ. 54): Աւարտելով առեւտրական վարժարանը, Լեւոն Կ. Պալճեան կը ստանար համալսարանական վկայական, եւ իսկոյն կը հրաւիրուէր որպէս ուսուցիչ Պուլքիչի Միսաքեան-Քեսիմեան ազգային վարժարանէն, աւանդելով ոռումաներէն լեզու, ոռումէն ժողովուրդի պատմու-

թիւն, աշխարհագրութիւն, հայերէն լեզու եւ մարմնակրթութիւն: Պալճեան որպէս ուսուցիչ «իր բարոյական եւ գաղափարական մարդու սրտառու պատկերով» կը տպաւորի ուսանողութիւնը երկար ժամանակ որպէս հմուտ, եռանդուն, հաւատաւոր մանկավարժ եւ դաստիարակ: 1932 թուի սեպտեմբերին Պալճեան Պուլքիչի պետական համարարանին կը ընդունուէր որպէս ուսանող հետեւ ելու համար փիլիսոփայութեան, մասնագիտութիւնը ընտրելով մանկավարժութիւնը եւ հասարակական գիտութիւնները (ԱՆԴ. 33): Նոյն ատեն կանդամագրուէր Հայ Ռուսանողներու Միութեան, դառնալով անոր անդամներէն մին: Միութեան բառական անդամներէն մին որպէս Միութեան քարտուղարը իսկ 1933 յոնուարին «Խափֆի» Կրթական Մշակութային Միութեան, ուր յուլիսին Պալճեան կոտար իր առաջին հայապարհակային բանախոսութիւնը: Իր ուսուղական եւ ուսուցչական աշխատանքներու կողքին Լեւոն կապ կը պահէր թեմի առաջնորդ Յուսիկ արքեպիսկոպոս Զոհրապետնի եւ եկեղեցական վարչութեան հետ 1934 կամ 1935 սկսած մասնաւոր առիթներով ալ առաջնորդի հովանաւորութեան տակ եղող մշակութային ձեռնարկներուն կը մասնակցէր եւ կամ կը բանախօսէր: Մայր Աթոռոյ նուիրակ Գարեգին արքեպիսկոպոս Յովսիկեանի Պուլքիչ այցելութեան 1934 նոյեմբերին, Պալճեան կը լսէր հայրապետական զեկուցումը, եւ մշակութային ձեռնարկի մը առիթով կը խօսէր հայրենաշունչ ճառ մը նուիրակ Մըրազանի ներկայութեան ու անոր անձի մասին: 1935 յունիսին Պուլքիչի մէջ կայսարակի հայերէն թարգմանութեան 1500 ամեակի տօնակատարութեան առիթով նում մանիսյ յորելինական յանձնախումբ մը կազմուած էր 16 մտաւորականներէ բաղկացած, գլխաւորութեամբ Նիկոլա Եորգայի, որոնց աշխատանքներուն մէջ գործոն զեր վերցուցած էին փրոփ. Յակոբ Սիրունի եւ Լեւոն Կ. Պալճեան: 1936 ին, յանձնախումբ իր աւարտական քննութիւնները պետական համալսարանին, Պալճեան կը ստանար ուսուցիչ-մանկավարժի պատկառորի գիտական աստիճանը համալսարանի գրականութեան եւ փիլիսոփայութեան բաժնէն, գրելով իր աւարտաճառը «Կարգապահութեան հարցը մանկավարժութեան մէջ» իր ուսումնախումբութիւնը, հետեւողութեամբ իր մտածողութեան վրայ մեծապէս ազդող ամերիկացի մանկավարժ ճան Տուիի տեսութիւններուն: Տարի մը եւս հետեւելով պետական համալսարանի Տիտու Մայորիսկուի անուան մանկավարժական դասընթացքներուն, Պալճ-

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա ՊԱԼՁԵԱՆ

եան կը ստանար համապատասխան վկայական 1937ի յունիսին (ԱՆԴ 58): Երիտասարդ հայ մտաւորականներու գործակցութեամբ ան կը խմբագրէր «Հերկ» ամսագիրը, որուն նպատակն էր հայ ընթերցողին ներկայացնել առարկայօրէն ներկայ քաղաքակիրթ այխարհի գիտական, մշակութային, ընկերային, տնտեսական կենաքի արժեքներն ու մտածումները (ԱՆԴ 59): «Հերկ» տարրուան մը կեանք կունենար եւ 1938ի մայիսին իր վերջին 12րդ համարով կը դադրէր: Հոն «Կարապետ Պալճեան Հանդէս է գալիս հրապարակագրի իր խոստմալից տաղանդով, գրական փորձով ու ճաշակով» (ԱՆԴ 60): 1937-1942 տարիներուն Պալճեանի եւ թեմակալ առաջնորդ Յուլիսիկ արքեպիսկոպոսի միջնեւ մտերմութիւն կը հաստատուէր «Հոգեւոր եւ մտաւորական գետնի վրայ, ու այդ լրջանին էր մանաւանդ որ նորա հոգու եւ գիտակցութեան մէջ ամրապնդում էր սէրը եւ պաշտամունքը հանդէպ Ս. էջմիածնի» (ԱՆԴ 73): Ինչպէս բովանդակ Խորմանիոյ, նաեւ հայ համայնքին ներս խոր սուգի եւ տրտմութեան օրեր եղան յայտնի մտաւորական եւ ոռումանական ակադեմիայի անդամ փրոք. Նիկոլա Եորգայի բռնամահ վախճանը 1940 նոյեմբեր 27ին: Կարապետ Պալճեանի վրայ խորապէս ազդած էր գերման ֆաշիստներու յատուկ կազմակերպութեան ձեռքով կատարուած ոճիրը որով տանջամահ կը վախճանէր այդ մեծ պատմաբանն ու հայ ժողովութիւն ջերմ բարեկամը, Պուքրէշի մօտիկ Ստրենիկ անտառին մէջ: Եորգա միջազգային համբաւ կը վայելէր որպէս անդամ ֆրանսական կաճառին, ինչպէս նաեւ Եւրոպայի բոլոր երկիրներու գիտական եւ ակադեմական կաճառներուն: Գաղտնի պայմաններու ներքեւ Եորգայի թաղումը տեղի կունենար Պուքրէշի գերեզմանատան մէջ նոյն օրն իսկ, ի ներկայութեան նաեւ Կարապետ Պալճեանի (ԱՆԴ 83): Պալճեանի գրական վաստակը փայլեցաւ «Մուսա լերան Հայերը Ֆրանց Վերֆէլի վէպին մէջ» վերլուծական փորձով, որ գրական եւ քննադատական ուսումնասիրութեան բնոյթ կը կրէր, հրատարակուած 1940ին, 62 էջոց հատորով մը: Ֆրանց Վերֆէլ 1933 թուին գրած էր իր ծանօթ «Մուսա լերան քառասուն օրերը»: Պալճեանի գրական արգասիքին մաս կը կազմէր նաեւ 1943ի ապրիլին ի լոյս ընծայած «Խրիմեան Հայրիկ որպէս դաստիարակ» աշխատասիրութիւնը 155 էջ, 10 գլուխներէ բաղկացած, ուր քննուած է Հայրիկի տեսական եւ փիլիսոփայական հայեացքը մարդու եւ անոր դաստիարակչական

գերի վրայ: Հոն ի միջի այլոց վերլուծուած են անհատի կատարելագործման այն եղանակները զորս Խրիմեան առաջարկեր էր այլիրու եւ կանաց դաստիարակութեան համար:

3592. ՀՈԳԵԽՈՐԱԿԱՆԸ

1942 թուի հոկտեմբեր 23ին, Ռումանիոյ թեմի երկարամեայ առաջնորդ Յուսիկ արքեպիսկոպոս Զոհրապեան կը վախճանէր իր պաշտօնին վրայ 71 տարեկանին (3513): Թեմական խորհուրդի որոշմամբ առաջնորդական տեղապահի ժամանակաւոր պաշտօնը կը յանձնուէր Մամբրէ քահանայ Պիպերեանի: Շուտով սակայն, երբ թեմական խորհուրդը առաջնորդի թեկնածու մը գտնելու գործին կը ձեռնարկեր, անդամոց միտքը կը կեղրոնանար ուսուցիչ եւ մանկավարժ, գրականագէտ եւ համալսարաւարտ Լեւոն Կարապետ Պալճեանի վրայ, ինչպելով իրմէ որ տար իր հաւանութիւնը հոգեւորական դառնալու, նկատի ունենալով մանաւանդ որ Պալճեան այլ բարեմասնութեանց կողքին ուսումնաբէնի քաջ տեղեակ էր ու կը լրացնէր նաեւ ստիպողական այլ պահանջը եւս: Իր 35 տարիքի լրումին Լեւոն Կարապետ Պալճեան կը հաւանէր ընդգրկել հոգեւորական սսպարէզ, ու 1943ի սեպտեմբերին Աթէնք ուղեւորելով վարդապետական ձեռնադրութիւն կը ստանար տեղւոյն առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Մազլմեանէ սեպտեմբեր 30ին, վերակոչուելով Տէր Վազգէն վարդապետ: Նէպի Աթէնք ճամբորդութեան, ձեռնադրութեանց ու յարակից պարագաներու մասին գրած ենք կանուխէն, մատնանշելով նաեւ երկու օրուան ընթացքին աշխարհական վիճակէ դպիրի, կիսասարկաագի, սարկաւագի, քահանայի եւ վարդապետի աստիճանին հասած ըլլալու բացառութիւնը (3518): Սուչավայի Ս. Հաճկատար վանքին մէջ իր անդրանիկ պատարագը մատուցանելէ ետք, նոյն տարրուայ նոյեմբեր 28ին Պուքրէշի Ս. Հրեշտակապետք մայր եկեղեցւոյ մէջ նորընծայ վարդապետը «ծովածաւալ բազմութեան առջեւ» կը մատուցանէր իր երկրորդ պատարագը, եւ նոյն օր թեմական պատգամաւորական ժողովը Վազգէն վարդապետը կ'ընտրէր Ռումանահայ թեմի առաջնորդական տեղապահ: Ըստրութիւնը պետական հրովարտակով իսկոյն կը հաստատուէր: 1948 յուլիս 25ի թեմի պատգամաւորական ժողովը թեմակալ առաջնորդ կ'ընտրէր զինք, եւ 1948 մայիս 20ին էջմիածնի մէջ ծայրագոյն վարդապետի աստի

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՊԱԼՁԵԱՆ

հաները կը ստանար Գէորգ Զ. կաթողիկոսին (3518): Եպիսկոպոս կը ձեռնադրուէր Մայր Աթոռի մէջ 1951 յուլիս 8ին դարձեալ Գէորգ Զ. կաթողիկոսին (3564):

3593. ՎԱԶԳԵՆ ԵՊՈՒԹԵԿՆԱՄՈՒ

Ռումանիոյ թեմին առաջնորդ Վազգէն Եպիսկոպոս Պալճեան, 1954ի վերջաւորութեան միանգամայն կը լնարուէր նաեւ առաջնորդ Պուլկարիոյ թեմին: Մայր Աթոռի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իր գեկտեմբեր 31ի նիստին յատուկ պաշտօնագրով կը տեղեկացնէր Պուլկարահայ թեմական խորհուրդին «Խումանիոյ թեմի առաջնորդ Տ. Վազգէն եպիսկոպոսին Խուլգարահայ թեմի ժամանակառ թեմակալ հաստատելու մասին» (ՎԱԶ. 296): Իր բարուք ծառայութեամբ յայտնի, երիտասարդական կորովով եւ համալսարանական ուսմամբ օժտեալ հայրենասէր եպիսկոպոսը իսկոյն կը նկատուէր յարմարագոյն թեկնածուն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Աթոռին թէ Մայր Աթոռին եւ թէ մանաւանդ Խորհրդային եւ հայրենի իշխանութիւններէն, որոնք միակամ առիթը կը լնայէին Պալճեանի կանխամըտածուած երկարատեւ այցելութեանց ձեռնարկելու ներքին թեմերէն ներս: 1954 թուի գեկտեմբեր 11ին մինչեւ 1955 մարտ 4 տեւող երկու ու կէս ամիսներու ընթացքին Վազգէն եպիսկոպոս կարգաւ այցելեց Հայաստանի, Վրաստանի, Ասորպէյձանի եւ Ռուսաստանի հայ համայնքները ուր կրօնական արարողութեանց կը նախագահէր, պատարագ կը մատուցանէր ու կը քարոզէր, անուղղակի կերպով տպաւորելու համար հայ հաւատացները իր բարեմոյն հաղորդականութեամբը: Կանխաւ ըսած ըլլանք սակայն թէ Պալճեանի այսպէս կոշտուած անպաշտոն եւ սքօղեալ թեկնածութիւնը Խորհրդային իշխանութեանց կողմէ, բարիք մը միայն կը ըլլար հայ եկեղեցւոյ եւ ազգին, նկատի առած հեռաւոր ապագան որ ճշդիւ եւ ճշմարտիւ կարդարացնէր ընտրութիւնը այլապէս լաւագոյն թեկնածուէին յանձին Վազգէն եպիսկոպոս Պալճեանի: 1954 գեկտեմբեր 11ին Պուլքէցն երեւան կը մեկնէր Պալճեան, նախ եւ առաջ մասնակցելու համար Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի հերթական նիստին որ պիտի գումարուէր գեկտեմբեր 20ին, Վահան արքեպիսկոպոս Կոստանդնականի նախագահութեամբ: 1955 յունուար 4ին Վազգէն եպիսկոպոս գնացքով Շիրակի թեմը կը մեկնէր Լենինական, նախագահելու համար

Սուրբ Ծննդեան եւ Ջրօրհնեաց կրօնական հանդիսութեանց: Չորս օր հաւատացեալներու հետ հանդիպումներ ունենալիք ետք, «վառ եւ անմոռաց» յիշատակներով, եպիսկոպոսը կը վերադառնար երեւան, յունուար 9ին երեւանի Ս. Սարգսի, եւ 16ին Ս. Յովհաննէս եկեղեցիներուն մէջ պատարագելու եւ քարոզելու համար: Յաջորդ օրն իսկ եպիսկոպոսը կը մեկնէր Թիֆլիս, տալու համար պաշտօնական այցելութիւն մը թեմին հին տոմարի գրութեամբ Սուրբ Ծննդեան եւ Ջրօրհնէքի տօներուն նախագահելու համար: Այցելած է «եղբայրական Խորհրդային Վրաստանի» գեղատեսիլ վայրերը, ինչպէս նաեւ հայ մշակոյթի հետ կապուած յայտնի ու խտատեղիները, Սայեաթ Նովայի, Սունդուկեանի եւ Թումանեանի հետքերով: Զատագոված է հայ եւ վրացի ազգերու գործակցութիւնը, որոնք «գրեթէ միասին ծնան եւ միասին ապրեցան որպէս զիրար համկցող հարեւաններ» (ԱՆԴ 302): Շեշտած է մանաւանդ յիշեալ գործակցութիւնը Խորհրդային դարաշրջանին որ գրաւեռուած է «օգտակար եւ շնարար արդիւնքներով»: Երեւան վերադառնալով Վազգէն եպիսկոպոս կը մասնակէր Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի յունուար 29ի նիստին, եւ փետրուար 4ին գնացքով կը մեկնէր Պաքու, Ասորպէյձանի հայ թեմին այցելութեան: Կը հասնէր յաջորդ օր, «տեղի հայկական եկեղեցիներում յաւուր պատշաճի քարոզներով հանդէս գալու, հաւատացեալների հետ հանդիպելու եւ թեմի հոգեւորական ու հասարակական աշխատանքներին ծանօթանալու համար» (ԱՆԴ 304): Պաքուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պատարագած ու քարոզած է, եւ պատարագէն ետք «ժողովուրդը երկար ատեն մնաց եկեղեցւոյ մէջ, մտէն տեսնելու, հարցուի ընելու եւ զրուցելու համար արտասահմանէն եկած հոգեւորականին հետ» (ԱՆԴ 305): Նոյն օրերուն Վազգէն եպիսկոպոս պաշտօնական այցելութիւն կուտար նախ Ռուս Ուղղափառ մայր եկեղեցին, եւ ապա, ընկերակցութեամբ թեմի առաջնորդ Գարեգին ծայրագոյն վարդապետի, կայցելիր Հանրապետութեան մահմետական դաւանութեանց պետ Շէյխ իւլ Խւլամին: Իր երկրորդ պատարագը Պաքուի մայր եկեղեցւոյ մէջ մատուցանելի ետք փետրուար 13ին, Վազգէն եպիսկոպոս կ'անցնէր Կիրովապատ, ուր շուրջ 60,000 հանդէս կիրովապատ, ուր շուրջ 1,600 հայեր կը բնակէին, իրենց «Հոյակապ Ս. Լուսաւորիչ եկեղեցիով», կառուցուած 1853 կուտարուիչ եկեղեցիով»: Կառուցուած 1853 թուականին: Հոյն եւս փետրուար 15ին պատարականին: Հոյն եւս փետրուար 15ին պատարագելէ եւ քարոզելէ ետք, նոյն օր կը տարագելէ եւ քարոզելէ ետք, նոյն օր կը

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ և ՊԱԼՁԵԱՆ

վերադառնար Երեւան: Փետրուար 22ի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի նիստին կը ներկայացնէր իր շրջապատճի մանրամասն տեղեկագիրը, վերլուծաբար տալով Լենինականի, Թիֆլիսի, Պաքուի եւ Կիրովապատի եկեղեցական եւ հասարակական գործունեութիւնները, տալով նաեւ իր նկատողութիւնները որոշ թերութիւններ վերացնելու գծով: Վերադարձին իր իւրայատուկ այցելութիւնները կուտար նաեւ Ռումանիոյ եւ Պուլարիոյ թեմերուն, անցուց գլխաւոր նպատակը իմտի ունենալով:

3594. ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գէորգ Զ. կաթողիկոսի մահին ետք Մայր Աթոռոյ տեղակալութեան շրջանը տեւած էր տասնեւհինգ ամիս, տեղակալութեամբ Վահան արքեպիսկոպոս Կոստանեանի, որ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի եւ եպիսկոպոսական դասուն հետ միատեղ անսմիջական ժողով մը գումարած էր 1954 յունիս 5 եւ 7 օրերուն (3587): Ժողովը տեղեակ ըլլալով վախճանեալ կաթողիկոսին նշանակեալ Տէրտէրեան Եղիչ արքեպիսկոպոսի Մայր Աթոռի տեղապահութեան անյոյս ելքի մասին, որոշած էր խկոյն ձեռնարկել կաթողիկոսական ընտրութեան: 1955 օգոստոս 17 ին Վահան արքեպիսկոպոսի նախագահութեամբ, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի արտահերթ նիստը գումարուեցաւ ազգային-եկեղեցական ժողովի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան կենսական խնդիրներով զբաղելու համար (ՎԱԶ. 314): Ժողովը օրակարգի վրայ ունէր հինգ հարցեր, որոնցմէ երկորդն էր «ընտրել Կենտրոնական Կազմակերպիչ Յանձնաժողովը գլխաւորելու ազգային-եկեղեցական ժողովի հրաւիրման աշխատանքները» (ԱՆԴ): Յանձնախումբի անդամներ նշանակուեցան Վահան Կոստանեան (նախագահ) եւ Եղիչ Տէրտէրեան արքեպիսկոպոսներ, Մահակ Տէր Յովհաննիսեան եւ Վազգէն Պալճեան եպիսկոպոսի, Վաթեան ծառական կաթողիկոսի, Աւետիք Բահամական եւ Մարտիրոս Տէր Մատեանեան: Յաջորդ օրն իսկ, օգոստոս 18 ին, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը շրջաբերական հեռագրով կը տեղեկացնէր նուրաբառական աթոռներուն եւ բոլոր թեմերուն, յայտնելով ազգային-եկեղեցական ժողովի գումարման թուականը՝ 1955 սեպտեմբեր 25-30, երբ պիտի կատարուէր նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը (55.ՔՁՄ.Թ.): Հեռագիրը կաւելցնէր նաեւ թէ եպիսկոպոսական ձեռնադրութիւններ եւս

պիտի կատարուէին, իսկ հոկտեմբեր 16 ին Մրրոց թարգմանչաց տօնին այս սրբարյամբունի օրհնութիւն (ՎԱԶ. 314): Լոյն հեռագիրը պարտք կը նկատէր յիշեցնելու թէ պատգամաւորներու ընտրութիւնը պիտի կատարուէր 1945 թուականի ազգային-եկեղեցական ժողովի հաստատած կանոնադրութեան հիմարյը, որ էականին մէջ նոյնն էր Գէորգ Ե. կաթողիկոսի պատրաստած 1925 կանոնադրութեան հետո: Նոյն օր կազմուած է նաեւ Համազգային Կեղրոնական Յանձնաժողով մը կաթողիկոսական ընտրութիւնը կազմակերպելու համար, որուն անդամներն էին Կ. Պոլսոյ Գարեգին պատրիարք Խաչատրան, Խաղ արքեպիսկոպոս Աջապահան, Եղիչ արքեպիսկոպոս Տէրտէրեան, Վազգին եպիսկոպոս Պալճեան, Վահան արքեպիսկոպոս Կոստանեան, Աւետիք Խահամելեան եւ Մատիան Կամսարական (ԱՆԴ 315): 1955 սեպտեմբեր 28 ին արդէն Երեւան ժամանած էին արտասահմանեան թեմերու ընտրեալ պատգամաւորներն ու թեմակալ եպիսկոպոսները, որոնք նոյն օր հիւրասիրուեցան Երեւանի Մակութային Կապի վարչութեան կողմէ: Ներկաներն էին արքեպիսկոպոսներ Մամբէք Գալֆայեան, Ամերիկայի արեւելեան թեմի առաջնորդ, Մամբէք Սիրունեան, Եգիպտահայ թեմի առաջնորդ, Վարդան Գասպարեան, Գալիփորնիային, Վազգէն եպիսկոպոս Պալճեան, Ռումանիոյ թեմին առաջնորդը, Դիրենիկ եպիսկոպոս Փոլատեան, Կիլիկիոյ կաթողիկոսութենէն, Հայկագուն ծ. վարդապետ Արրահամեան, Հայրիկ ծ. վարդապետ Ասլանեան, Պարգև ծ. վարդապետ Վրթանէսեան, Կորին վարդապետ Մանուկէան, չորսն ալ Երուսաղէմի պատրիարքութեան ներկայացուցիչներ, Սերովը ծ. վարդապետ Մանուկէան, Եւրոպայի Հայրապետական պատուիրակը, Շնորհք ծ. վարդապետ Գալուստեան, Գալիփորնիոյ թեմին առաջնորդը, եւ Պատկ ծ. վարդապետ թումայեան, Անգլիոյ Հայրապետական պատուիրակը: Իսկ ներքին թեմերէն Սուրբ Թորոսեան եւ Սահակ Տէր Յովհաննիսիան եպիսկոպոսներն ու Վարդան Տէր Մահական եւ Եղիչ Ազնաւորը: Խուս ուղղափառ եկեղեցւոյ պատուիրակութեան մաս կը կազմէին Մինսկի եւ Պելոռուսիոյ թեմակալ Պիտիրիիմ եպիսկոպոսն ու Պոկովի եւ Պորխոսի իուանի եպիսկոպոսը: Ըստունելութեան ներկայ էին նաեւ Խորհրդային Միութեան կրօնական պաշտամունքներու խորհուրդի նախագահ Ի.Վ. Պոլեանսկի, եւ Խորհրդային Հայաստանի նախարարութեան խորհուրդի հայ եկեղեցւոյ

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա. ՊԱԼՃԵԱՆ

գործերու խորհուրդի նախագահ Հրաչեայ Գրիգորեան: Յաջորդ օր, սեպտեմբեր 29ին, տեղակալ Վահան արքեպիսկոպոսի նախագահութեամբ բացումը կը կատարուէր ազգային-եկեղեցական ժողովին՝ 140 պատգամաւորներու մասնակցութեամբ: Առաջին նիստին «ողջոյնի սրտագին խօսքը» կարտասաննէր նախագահ սրբազնը, որմէ ետք առանձին ընտրութեամբ դիւնը կը կազմը էր նախագահի փախանորդներու, ատենապետներու եւ քարտուղարութեան: Նախագահի փոխանորդներ կը ընտրուէին Մամբրէ Սիրունեան եւ Մամբրէ Գալֆայեան արքեպիսկոպոսներն ու Վազգէն Պալճեան եպիսկոպոսը: Սեպտեմբեր 30ի երկրորդ նիստը էջմիածնի մայր տաճարին մէջ կը գումարուէր յետ միջօրէի ժամը 3ին, օրակարգի միակ եւ գլխաւոր հարցով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեամբ: Հայաստաննեայց եկեղեցոյ բոլոր եպիսկոպոսները նկատի ունենալով, ժողովականներ քուէարկութեամբ կաւարտէին իրենց քուէարկութիւնը ժամը հինգուէսին, հետեւեալ արդիւնքով. ՎԱԶԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃԵԱՆ 125 քուէ, Գարեգին պատրիարք Խաչատուրեան՝ 6, Վահան արքեպիսկոպոս Կոստանեան՝ 2, Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեան՝ 1, Մամբրէ արքեպիսկոպոս Գալֆայեան՝ 1, Տիրան արքեպիսկոպոս Ներսոնիսն՝ 1 (ԱՆԴ 317): Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընտրուած էր յանձին Ռումանիոյ եւ Պուլկարիոյ թեմերու առաջնորդ Վազգէն եպիսկոպոս Պալճեանի. որ ստացաւ ՎԱԶԳԻՆ Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս անունը: Նորընտիրը յայտնեց իր չնորհակալութիւններն ու երախտագիտութիւնը, եւ ապա արտասանեց իր աղոթքը: Ժողովի նոյն նիստը շարունակուեցաւ նախագահութեամբ նորընտիրի կաթողիկոսին: Սեպտեմբեր 30ին Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը պաշտօնական հեռագործ ծանոյց ընտրութեան արդիւնքը Հայաստանի եւ սփիւռքի բոլոր թեմերուն, հետեւեալ բնագրով. «Այսօր, սեպտեմբեր 30ին, ուրբաթ օր, ցերեկուայ ժամը 5ին, Սուրբ էջմիածնի Մայր Տաճարում, 137 պատգամաւորների ներկայութեամբ գումարւած Աղգային-եկեղեցական ժողովը, 125 ձայնով, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց Ռումանիոյ եւ Բուլղարիոյ Հայոց Առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոս Պալճեանին» (ԱՆԴ 318, 55. էջՄ. Ժ.մ.): Ամենայն Հայոց Հայրապետութեան Գահը տարի մը եւ հինգ ամիս ետք կ'օժտուէր իր նոր Գահակալովը, երրորդն ու վերջինը Խորհըրդային Միութեան ներքեւ կատարուած:

3595. ՕԾՈՒՄՆ ՈՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Վազգէն Ա. Պալճեան իր ընտրութեան յաջորդող կիրակին, հոկտեմբեր 2ին, հայրապետական օծում կը ստանար Ս. էջմիածնի մայր տաճարին մէջ հայաստանեայց եկեղեցոյ ութ եպիսկոպոսներու ձեռամբ եւ ի ներկայութեան ժողովական պատգամաւորներու եւ խուռներամ հաւատացեամերու: Ամպովանի ներքեւ ընտրեալ կաթողիկոսը հին վեհարանին դէպի տաճար կառաջնորդուէր եւ Ս. պատարագի մատուցմամբ կը ստանար հայրապետական ձեռնադրութիւնն ու օծումը հետեւեալ եպիսկոպոսներէն: Մամբրէ Սիրունեան եգիպտոսի, որպէս երիցագոյն նախագահողը, Մամբրէ Գալֆայեան Ամերիկայի, Վահան Կոստանեան Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի, Վարդան Գարդանի Գալֆայեան Գալֆայեան Սիրունեան Ամերիկայի կաթողիկոսութիւնը, Սիրունեան Ամերիկայի Փալմարայի կաթողիկոսութիւնը, Սամակ Տէր Յովհաննիսեան Մայր Աթոռոյ, եւ Սուրբ Թորոսի Մայր Աթոռոյ: Հայրապետական օծման ներկայ էին նաև քրիստոնեայ այլ յարանուանութեանց բարձրաստիճան ներկայացուցիչներ, Սինակի եւ Պելոսուսիայի մետրոպոլիտ Պիտիրիմ, որ կը ներկայացնէր համայն Ռուսիոյ պատրիարք Ալեքսին, Պաթումի մետրոպոլիտ Եղիշեմը, որ կը ներկայացնէր Վրաստանի ուղղափառ եկեղեցոյ պատրիարք Մելքիսեդեկ Երկրորդը: Հանդիսաւոր օծման կը յաջորդէր վեհարանի գահակարին մէջ նորընտիր կաթողիկոսին գահակարութեան հանդէսը, ի ներկայութեան բարձրաստիճան Հոգեւորականաց եւ պետական անձանց: Երեւանի մէջ տրուած ճաշկերոյթով եւ հիրասիրութեամբ կ'եղրափակուէին Վազգէն Ա. Կաթողիկոսի օծման եւ գահակալութեան Հանդիսութիւնները:

3596. ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵԽՆԱՐՈՒԹԻՒՆ

Յաջորդ կիրակին իսկ, հոկտեմբեր 9ին, Վազգէն Ա. կատարեց եօթ վարդապետներու եպիսկոպոսական ձեռնադրութիւնը: Մայր Աթոռի մէջ վերջին անգամ՝ 1951 թուականին կատարուած էր հինգ եպիսկոպոսներու ձեռնադրութիւնը, եւ իսկստ կապուներու կար նորերու, որոնք արդէն թեմարիքը կար նորերու, էին եւ կամ պատասխանառու հոգեւորականներ նորիրապետական աթոռներէն ներս: Երուսաղէմի հայոց Ս. Յակոբեանց կիրապետէն հինգ թեկնածուներ տնօրէն ժողովանքին հինգ ամսագիր կը ներկայանային, որոնցմէ վի որոշմամբ կը ներկայանային, որոնցմէ

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա. ՊԱԼՃԵԱՆ

երկու քը թեմակալներ էին արդէն: Խոկ Մայր Աթոռն ալ նորընտիր հայրապետի որոշմամբ երկու յառաջացեալ տարիի թեկնածուներ կը ներկայացնէր եպիսկոպոսական ձեռնադրութեան համար: Երուսաղէմի միաբանութեան թեկնածուներն էին Հայկազուն Արքահամեան, Հայրիկ Ասլանեան, Պարգև Վրթանէսեան, Սերովի Մանուկեան եւ Շնորհք Գալուստեան վարդապետները, որոնցմէ վերջին երկու քը. Սերովին հայրապետական պատուիրակն էր Երուպայի հայոց յանուն Գէորգ Զ. կաթողիկոսի, եւ Շնորհք թեմակալ առաջնորդն էր Գալիֆորնիոյ թեմին, հաստատած նոյնպէս հանդուցեալ Գէորգ Զ. կաթողիկոսէն: Էջմիածնի միաբանութեան թեկնածուներն էին Եղիշիկ Ազնաւորեան եւ Վարդան Տէր Սահկեան տարիքաւոր վարդապետները: Առաջին եօթ եպիսկոպոսներու կանոնական ձեռնադրութիւնը կատարուեցաւ հանդիսաւոր կերպով, խարտահիլակութեամբ Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեանի եւ ընթերակայութեամբ Վահան Կոստանեան եւ Վարդան Գասպարեան արքեպիսկոպոսներու: Երկու շարաթ ետք, հոկտեմբեր 23ին, զոյք մը եպիսկոպոսներ եւս ձեռնադրուեցան, երբ Վազգէն կաթողիկոս ընդունեց կատարուած միջնորդութիւնները, մին Կիլիկիոյ կաթողիկոսութեան Դամասկոսի թեմէն, եւ միւսը Անդլիոյ հայ համայնքի թեմական իշխանութեանց անունով: Ձեռնադրեամբ էին Երուսաղէմի Ս. Յակոբեանց պատրիարքութեան միաբաններէն Շաւարչ վարդապետ Գույլումեան, առաջնորդ Դամասկոսի թեմին, եւ Պատկ վարդապետ Թումայեան, հոգեւոր հովիւ եւ հայրապետական պատուիրակ Անդլիոյ հայ համայնքին: Վերջին այս երկու քը յայտնորդն էր ձեռնադրուէին առանց Երուսաղէմի միաբանութեան հաւանութեան եւ տնօրին ժողովի յանձնարարութեան: Միանուագ ինը եպիսկոպոսներու ձեռնադրութեամբ հայաստանեայց եկեղեցւոյ թեմերու վարչակարգը կը գտնէր հետզհետէ իր ընականուն ընթացքը:

3597. ՆՈՐԱՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

Մեր պատմութեան ընթացքին յաճախ հանդիպած ենք եւ անշուշտ պիտի հանդիպինք ինը նորապակ եպիսկոպոսներուն: Այստեղ յարմար կը տեսնենք տարու իրենց հակիրճ կենսագրականները: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՄԵԱՆ, ծնած Վանի Բերդակ գիւղը 1906ին, 1915ի եղեննին բազմահազար վասպուրականցին հետ գաղթած է Արտաշատ, ուր

երեք տարի յաճախած է վարժարան եւ ապա հաստատուած Երեւան իր ծնողներուն հետ: 1917ին վերադարձած է Վան, ուր նոր արհաւիրքներու եւ նոր գաղթի հետեւանքով մեկնած է Սալմաստ 1918ին եւ ապա Պարսկատան ճանապարհին կորսնցնելով իր ծնողներն ու հարազատները (72. հՀՄ. Ա. 30): Որպէս որր 1920ին Պաղտատի հայկական նահանգարի Օմարի որբանոցը մտած է իրեն տարեկից վանեցի հայ որբերու հետ: 1922ին Երուսաղէմի Արքարատեան որբանոցը ընդունած, եւ 1923ին ալ Դուրեան Եղիշէ պատրիարքի օրով Երուսաղէմի ժառանգաւորաց սան դարձած իր ընկերներուն հետ եւ ուսած Դուրեանի եւ Բարգէն եպիսկոպոս Կիլիստրէ սկսուցութեան ներքեւ: 1927ին ժառանգաւորացի շորս տարիները յաջողութեամբ աւարտելով, Դուրեանէ սարկաւագ ձեռնադրուած է, եւ 1930ին ընծայարանի բաժինը աւարտելով, տեղապահ Մերոպ եպիսկոպոս Նշանեանէ կուսակրօն քահանայ ձեռնադրուած, կոչուելով Հայկազուն (3400): Քանանդ տարիներ իր բեղուն ծառայութիւնը բերած է Ս. Յակոբեանց վանքին որպէս հովիւ, ժառանգաւորաց վարժարանի տեսուչ եւ սրբատեղեաց տեսուչ: 1954ին իր առաջին այցելութիւնը տուած է Մայր Աթոռ Գէորգ Զ. կաթողիկոսի մահուան եւ թաղման մասնակցելով որպէս Երուսաղէմի պատրիարքութեան ներկայացուցիչ (3586), եւ մասնակցելով Մայր Աթոռի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի նիստին (3587): 1955ին Հայկազուն վարդապետ Արքահամեան կը մասնակցէր Վազգէն Ա. կաթողիկոսի ընտրութեան որպէս պատգամաւոր, եւ նոյն տարին կը ձեռնադրուէր եպիսկոպոս: ՍԵՐՈՎԲԻ ԵՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ծնած 1908ին Վասպուրականի Ծվատանգիւղը, 1915ի եղեննին գաղթած է Սալմաստի վրայով զէպի Պարսկատան, եւ իրեն տարեկից հայ տղոց հետ մտած Պաղտատի հայոց նահանգարի Օմարի որբանոցը, եւ անկէ ալ Երուսաղէմի Արքարատեան որբանոցը: 1924ին ընդունուած է Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանէն Դուրեան Եղիշէ պատրիարքի օրով եւ աշակերտած Դուրեանի եւ Կիլիստրէ սկսուած Բարգէն եպիսկոպոսի: Աւարտելով ընծայարանի բաժինը, 1930ին Մերոպ եպիսկոպոս Նշանեանէ կուսակրօն քահանայ ձեռնադրուած է (3400): Որպէս Կիւլպէնկեան սան Սերովի վարդապետ Անդլիս զրկուած է Լոնտոնի Քինզ Գոլքէնին մէջ իրեն օծակից Շաւարչ վարդապետ Գույլումեանի հետ հետեւելու աստուածաբանութեան եւ Ս. Գրող Պատրիարքացքներու: 1933ին վանք վերադարձաւ:

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա. ՊԱԼՃԵԱՆ

նալով կարգուած է ուսուցիչ ժառանգաւոր ժարդարաններու: 1935-1936 դասաւանդած է Կիլիկիոյ Անթիլիասի դպրեվանքին ներս, ու ապա Երուսաղէմ վերադառնալով ստանձնած է Թարգմանչաց վարժարանի տեսչութիւնը, եւ ապա 1946-1950 ժառանգաւորաց վարժարանի տեսչութիւնը: 1950ին Գէորգ Զ. կաթողիկոս Հայրապետական կոնդակով զինք նշանակած է նուիրակ Եւրոպայի, հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի, Երուսաղէմի աղջտեալ-ներուն ի նպաստ Հանգանակութիւն կատարելու համար: 1953ին Սերովքի Տ. վարդապետ Մանուկեան Փարիզի Հայոց առաջնորդ կընտրվի, յաջորդելով Արտաւազդ արքեպիսկոպոս Սիւրմէկեանի, ու Գէորգ Զ. կաթողիկոսին կը նշանակուի նաեւ կաթողիկոսական պատրիակ Արեւմտեան Եւրոպայի, որուն վրայ ալ Վազգէն կաթողիկոսին եպիսկոպոս կը ձեռնադրուի: ՊԱՐԳԵՒ ԵՊՍ. ՎՐԹԱՆՀԵԱՆ ծնած է Պալլբեսիր 1905ին: 1922ին Վրթանէսեան ծնողներն ու ընտանիքի բոլոր անդամները նահատակուած են թուրքերու կողմէ, երբ յոյները նոյն տարին թուրքիոյ արեւմտեան նահանգներէն խուճապահար կը նաշանջէին (30.ՄԻՌ.291): Կանուխին Կ. Պոլիս փոխադրուած է եւ աշակերտած Կերոննական Վարժարանին 1920-1923: Տարի մըն ալ Արմաշի ինամակալութեան Պալաթի մէջ բացած ընծայարանը յաճախելք ետք. 1925ին Երուսաղէմ մեկնած է եւ ընդունուած ժառանգաւորաց վարժարանէն Դուրեան Եղիշ պատրիարքի օրով, որուն ձեռքով ալ 1926ին սարկաւագ ձեռնադրուած է, եւ ապա կուսակրօն քահանայ 1930ին Մեսրոպ եպիսկոպոս Նշանեանէ (3400) ու ծառայած Ա. Ցակորեանց ուխտին մինչեւ կեանքին վերջը: Պարգեւ վարդապետ յայտնի եղած է որպէս աշխատակից «Սիոն» ամսագրի, ուր գրած է մեծ թիւով յօդուածներ Երուսաղէմի յատուկ, Հայեկեղեցոյ տօներուն յատուկ, եւ առ Հասարակ Հայ մատենագրութեան վերաբերեալ: 1955ին Մայր Աթոռ մեկնած է եւ Երուսաղէմի միարանութեան ինդրանքով եպիսկոպոս ձեռնադրուած Վազգէն կաթողիկոսին: Պարգեւ եպիսկոպոս Վրթանէսեան տարի մը ետք սակայն սրտի տագնապով վախճանած է Երուսաղէմի իր բնակարանին մէջ 51 տարեկանին: ՀԱՅՐԻԿ ԵՊՍ. ԱԱԼԱՆԵԱՆ, Երուսաղէմի ընծայարանի Մելգոնեան սաներէն չըսին հետ միասին սարկաւագ ձեռնադրուած էր Դուրեանէ, եւ քահանայական վարդ սահածած թորգոմ պատրիարք Գուշակեանէ 1932ին (3434): Մնած 1909ին Վասպուրա-

կանի Աղբակ գաւառի Երինգան գիւղը, 1915ին գաղթած է Պարսկաստան եւ Պարտևա ուր եւ իր ընկերներուն հետ մտած է Նահր Օյարի Հայ որբանոցը ու մինչեւ 1922 զպրցական դասերու հետեւած: Խնչպէս իր ընկերները, ինք եւս Երուսաղէմի Արարատեան որբանոցին վանք փոխադրուած է եւ աշակերտած ժառանգաւորաց վարժարանին Դուրեան պատրիարքի օրով, որմէ իսկ սարկաւագ ձեռնադրուած: Հայրիկ վարդապետ ընդմիշտ մաց վանք եւ պատասխանատու պաշտօններ ստանձնեց: 1954ին Գէորգ Զ. կաթողիկոսի մահուան առիթով Մայր Աթոռ մեկնած է ու մասնակցած կաթողիկոսի թաղման արարողութեան (3586): ԾՆՈՒՐՀՔ ԵՊՍ. ԳԱԼՈՒՄՏԵԱՆ, ծնած Եոզափի հյտէ գիւղը 1913ին, որբացած է եւ որպէս մանուկ որբանոցի որբանոց տարուած է: Այդ մասին գրած ենք կանուխին իր աշխարհական Արշակ Գալուստեան անուան տակ (3297): Ժառանգաւորաց ընդունուած է 1927ին Դուրեան պատրիարքի օրով, եւ 1932ին թորգոմ Գուշակեան սարկաւագ ձեռնադրուած: Քահանայական կարգ ստացաւ թորգոմ պատրիարքի 1935ին (3469) եւ որպէս լուրջ, խոհեմ եւ նուիրեալ հոգեւորական այլազան կրթական եւ տեսչական պարտականութիւններ ստանձնեց Երուսաղէմէ ներս ինչպէս նաեւ Անթիլիասի դպրեվանքին մէջ որպէս տեսուչ 1941-1944: Հոգեւոր հովի կարգուեցաւ Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցոյն 1945ին, եւ 1948ին Ամերիկայի արեւելեան թեմէն հրաւիրուեցաւ որպէս հոգեւոր հովի նիւ Ճրգիլ Փելլըրընի եւ նիւարգի հայ եկեղեցիներուն (3555): 1952ին Գալիֆորնիոյ թեմին առաջնորդ ընտրուեցաւ Գէորգ Զ. կաթողիկոսի կոնդակով, ուր մաց մինչեւ 1957: 1955ին որպէս թեմակալ մասնակցեցաւ Ազգային Եկեղեցական ժողովին, եւ Վազգէն կաթողիկոսի ընտրութենէն անմիջապէս ետք եպիսկոպոսացաւ: ԵԶՆԻԿ ԵՊՍ. ԱԶԱՄԻՐԻՄԵԱՆ, ծնած է 1880ին Ալաշկերտի թոփրակալ գիւղը, 1894ին Գէորգեան ձեմարան ընդունուած եւ ուսման ընթացքը աւարտած 1902ին, որմէ ետք ուսուցչութիւն կատարած է Կարսի եւ Արտահանի Հայկական դպրոցիներուն մէջ մինչեւ 1912: Ապա երկար տարիներ աշխատած է որպէս հաշուապահ Լենինականի, Կիրովապատի եւ Երեւանի մէջ: 1944 թուի մարտ 1ին վարդապետ ձեռնադրուած է էջմիածնի մէջ եւ անդամակցած Մայր Աթոռի միարանութեան: Յաջորդ տարին նշանակուած է Գեղարդի վանքի վանահայր: 1954ին նշանակուած է Պաքուի վանահայր: 1954ին սահանակուած է Պաքուի վանքի առաջնորդ, որուն վրայ ալ հայոց թեմին առաջնորդ, որուն վրայ ալ

Տ. Տ. ՎԱՂԳԻՆ Ա. ՊԱԼՃԵԱՆ

1955ին եպիսկոպոս ձեռնադրուած Վաղգէն կաթողիկոսէն: Նոյն տարին ընտրուած է անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի (60 էջՄ. մլ. էԲ 77): ՎԱՐԴԱՆ ԵՊՈ. Տէ՛ր ՍԱՀԱԿԵԱՆ, քահանայի զաւակ, ծնած է 1878ին Լեռնային Ղարաբաղի Ջրաբերդի շրջանի Կիւլեաթաղ գիւղը եւ մինչեւ 1901 ուսած Շուշիի թեմական դպրոցին մէջ: Ապա նշանակուած է ուսուցիչ Ջրաբերդի դպրոցներուն մէջ ուր պաշտօնավարած է մինչեւ 1904: Նոյն թուականին քահանայ ձեռնադրուած է եւ պաշտօնավարած Հիւսիսային Կովկասի Գրոդնի քաղաքը 25 տարիներ (68. էջՄ. է. 63): 1929ին Պաքու փոխադրուած է եւ սովետական կարգերու բերումով ուսուցչութիւն կատարած: 1945ին նշանակուած է Պաքուի Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ աւագերէց: Գէորգ Զ. կաթողիկոսի օրով 1951ին Մայր Աթոռի միաբանութեան անդամ դարձած է եւ վեղար ստացած 1952ին, ու երկու տարի վարած Վրաստանի թեմին առաջնորդութիւնը: 1954ին նոր նախիճնականի եւ Հիւսիսային Կովկասի թեմակալ առաջնորդ նշանակուած է, որուն վրայ ալ եպիսկոպոսացած: 1955ին ընտրուած է նաեւ անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին (ԱՆԴ): ՇԱՀԱԲԾ ԵՊՈ. ԳՈՒՅՈՒՄԾԵԱՆ, ծնած 1908ին Կիլիկիոյ Հաճըն քաղաքը եւ ծնողներուն հետ զաղթի ճամբան բռնած հայկական մեծ եղենի տարիներուն: Հասած է Տէ՛ր Զօր եւ ազատած ստոյզ մահէ ու հաստատուած Դամակոս: 1924ին Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանէն ընդունուելով աւարտած է նաեւ ընծայարանի բաժինը, նախ սարկաւագ ձեռնադրուելով Դուրեան Եղիշէ պատրիարքէն ու ապա կուսակրօն քահանայ 1930ին Մեսրոպ եպիսկոպոս նշանեանէ (3400): Ուսած է Լուտոնի Գինզգ Գոլցին մէջ երկու տարի եւ վերադառնալով Երուսաղէմ ստանձնած է վանական եւ հոգուական պաշտօններ: Հետեւած է իրաւաբանութեան եւ վկայուած որպէս փաստաբան: 1949ին Կիլիկիոյ Գարեգին Ա. կաթողիկոսէն նշանակուած է առաջնորդ Դամակոսի թեմին (3550), որուն վրայ ալ Վաղգէն կաթողիկոսէն եպիսկոպոս ձեռնադրուած: ՊՍԱԿ ԵՊՈ. ԹՈՒՄԱՅԵԱՆ, ծնած Պարտիզակ 1912 թուականին եւ ուսած իր ծննդավայրին եւ ապա Կ. Պոլսոյ ազգային ինամակալութեան որբանոցին մէջ մինչեւ 1919: 1922էն 1926 որպէս որը անցած է Յունաստանի Սիրա քաղաքը ուր ուսած է ամերիկան որբանոցին մէջ: 1926ին Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանէն ընդունուելով յաջողութեամբ աւարտած է

զայն ու սարկաւագ ձեռնադրուած 1930ին տեղապահ Մեսրոպ եպիսկոպոսէն, ու ընծայարանը աւարտելով կուսակրօն քահանայ ձեռնադրուած 1934ին թորգոմ պատրիարք Գուշակեանէն: Պատկ վարդպատ օժտուած ըլլալով երաժշտական յատկութեամբ, արժէքաւոր յօդուածներ գրած է «Միոն» ամսագրին մէջ ու հայ եկեղեցական երաժշտութիւն աւանդած երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանէն ներս: Վարչական գործունէութիւն ունեցած է որպէս առաջնորդական փոխանորդ Աղեքսանդրի թեմին 1943-1949, որմէ ետք Գէորգ Զ. կաթողիկոսէն նշանակուած է Լուտոնի հայոց հոգեւոր հովիս ուր ծառայած է երկար տարիներ: Իր այս պաշտօնին վրայ 1955ին որպէս պատգամաւոր Մայր Աթոռ մեկնած է ու մասնակցած Ազգային-Եկեղեցական ժողովին, եւ հոկտեմբեր 23ին եպիսկոպոս ձեռնադրուած Վաղգէն կաթողիկոսէն եւ նշանակուած Անգլիոյ հայրապետական պատուիրակ ու Քենթըրապըրիի եւ համայն Անգլիոյ արքեպիսկոպութեան մօտ հայ եկեղեցոյ ներկայացուցիչ (81. էջՄ. է. 54):

3598. ՄԻՒՌՈՒՅՌՆԵՑՆԵՐ

Վաղգէն Ա. ի անմիջական ձեռնարկն էր նաեւ կատարել միւռոնի օրհնութիւն երր տակաւին պատգամաւորներ եւ հոգեւորականներ Մայր Աթոռ կը գտնուէին: Իր հայրապետական օծում ստանալին երկու շարաթ ետք, կիրակի հոկտեմբեր 16ին, երկար տարիներու հեռաւորութենէ ետք, կատարեցաւ միւռոնի օրհնութիւնը համազգային խանդավառութեամբ ու մասնակցութեամբ ութ հին եւ եօթ նորապասկ եպիսկոպոսներու: Վերջին միւռոնօրհնէքը Մայր Աթոռի մէջ կատարած էր Գէորգ Ե. Սուրէնսան 1926 թուականին (3445), ու անմէ ետք նորէն Ա. եւ Գէորգ Զ. չին կրցած կատարել միւռոնի օրհնութիւն քաղաքական անթոյլատու պարագաներու բերումով: Ուղիղ երեսնամեակ մը ետք կը կատարուէր ուշացած եւ կարօտագին այդ սրբազն ծէսը՝ որ պիտի հայթայթէր պակսող սրբալոյս միւռոնը ներքին եւ արտասահմանեան բոլոր թեմերուն, տալով նաեւ մանաւանդ Հայաստանի հայ ժողովուրդին մոռցուած եւ անտեսուած քրիստոնէական հաւատքի ցոլքը: Հանդիսաւոր արարողութիւնը կատարուեցաւ մայր տաճարէն ներս, խուռներամ բազմութեամբ եւ անսահմընթաց խանդավառութեամբ, նոյնիսկ հայեացքին ներքեւ խորհրդային իշխանութեանց: Թեմակալ եպիսկոպոսներ իրենց հետ տարին

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա. ՊԱԼՁԵԱՆ

սրուակներով լեցուն ամսուաբոյր միւռոնը եւ բաշխեցին հայ եկեղեցիներուն:

3599. ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԵՄԵՐ

Վազգէն Ա.ի գահակալութենէն ետք Մայր Աթոռոյ միաբանութիւնը կը հաջուէր չինդ եպիսկոպոսներ եւ տասնեակ մը նոր ընծայ վարդապետներ: Տասնամեակ մը ետք, 1965 թուականին, չինդ ծերունի եպիսկոպոսները Սահակ Տէր Յովհաննիստեան, Վահան Կոստաննեան, Սուրէն Թորոսեան, Եղիկ Աղաւուրեան եւ Վարդան Տէր Սահակեան, արդին վախճանած էին, եւ անոնց տեղ ութ նորեր ձեռնադրուած Մայր Աթոռի վրայ, որոնք էին, Հայկազուն Աբրահամեան, Ասողիկ Ղազարեան, Կոմիտաս Տէր Ստեփաննեան, Յուսիկ Սանթուրեան, Մատուցոց Թամիրեան, Պարգև Գէորգիեան, Վահան Տէրեան եւ Տիրայր Մարտիկեան: Ասոնք պաշտօններ ստանձնեցին մայրապանքէն ներս եւ կամ ներքին թեմերուն մէջ որպէս թեմական ներքին բաղկացեալ միաբանական ներքին կանոնագրութիւն մը, որպէսզի հոգեւորականներ ապրին եւ ծառայեն անձնուիրարար «ժուժկալութեան, աղքատութեան եւ անպայման հնազանդութեան հայրապետահաստատ կանոններուն համաձայն» (65. ԷջՄ. Ժ.Ժ. 22): 1965 թուականի հայրապետական զեկուցման համաձայն Մայր Աթոռոյ եւ ներքին թեմերուն մէջ կը պաշտօնավարէին 17 միաբաններ, որոնցմէ եօթը եպիսկոպոսներ էին, վեցը վարդապետ, եւ չորսը սարկաւագ: Խոկ ներքին թեմերուն մէջ գործող քահանայից զամը կը բաղկանար ընդամէնը 57 հոգիներէ: Արտասահմանի հայրապետական թեմերուն մէջ 1965ի տուեալներով, էջմիածնի միաբանութենէն 25 եպիսկոպոսներ եւ 11 վարդապետներ ու 4 սարկաւագներ կը պաշտօնավարէին: Ներքին թեմերը վեց էին, առաւել երեք վահանայրութիններ, ըստ հետեւեալին: Արարատեան հայրապետական թեմ, փոխանորդութեամբ Վահան եպիսկոպոս Տէրեանի: Շիրակի թեմ, առաջնորդութեամբ Մաշտոց եպիսկոպոս Գրիգորեանի տեսչութեամբ Տաղավար 1955 գրեց 1ին, «Սէրն կոնդակը գրեց 1955 գեկտեմբեր 1ին, Արքունական կոնդակը գրեց 1955 գեկտեմբեր 1ին, իւմ ընդ ամեննեսին ձեզ ի Քրիստոս Յիսուս» ընարանով ու զայն ուղղելով Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի եւ Կ. Պողոսյ պատրիարքութեանց ու անոնց ենթակայ հոգեւորապետութեան եւ վարչական եպիսկոպոս Սանթուրեանի: Նոր նախիջեւանի եւ հիւսիսային Կովկասի թեմ, առաջնորդութեամբ Յուսիկ եպիսկոպոս Սանթուրեանի: Նոր նախիջեւանի եւ հիւսիսային Կովկասի թեմ, առաջնորդութեամբ Խովովին:

Մոսկուայի հոգեւոր հովութիւն, Պարգեւեպիսկոպոս Գէորգեանի տեսչութեամբ: Երեք վանահայրութիւններն էին. Գեղարդայ վանքի վանահայր Վանահայրութեամբ Մուշեղ վարդապետ Պետիկեանի: Դաւարագեազի Ս. Խաչ վանքի վանահայրութեամբ Պօղոս աբեղայ Տէր Նշանեանի: Խոր Վիրապի վանքի վանքի վանահայր Վանահայրութեամբ: Երեքրանի: Յովհաննի աւագ քահանայ Հաճեանի հովութեամբ: Սպահանի: Նոր Զուղա, Ներսէս աւագ քահանայ Դաւթեանի փոխանորդութեամբ: Եղիպտոսի, Մալքը բարքի արքեպիսկոպոս Սիրունեանի առաջնորդութեամբ: Իրաքի, թեմական խորհուրդի տեսչութեամբ: Արեւմտեան Եւրոպայի, Փարիզ հայրապետական պատուիրակութիւն, Սերովը եպիսկոպոս Մանուկեանի առաջնորդութեամբ: Յունաստանի, Աթէնք, Մերսոպ աւագ քահանայ Տէր Յակուպանի փոխանորդութեամբ: Ամերիկայի արեւելեան թեմի, Սիոն արքեպիսկոպոս Մանուկեանի առաջնորդութեամբ: Ամերիկայի արեւմտեան թեմի, թորգոմ եպիսկոպոս Մանուկեանի առաջնորդութեամբ: Յովհաննի առաջնորդութեամբ: Հարաւայի Ամերիկայի, Արժանիթին, Պրազիլ, Ռուսկուայ, Զիլի, Վենեզուելա, Բարգէն եպիսկոպոս Ապատեանի առաջնորդութեամբ: Անդիոյ հայրապետական պատուիրակութեան, Պատաւ Ամերիկայի, Արժանիթին, Պրազիլ, Ռուսկուայ, Զիլի, Վենեզուելա, Բարգէն եպիսկոպոս Ապատեանի առաջնորդութեամբ: Սարութիւննեանի տեսչութեամբ: Վիճնականի հովութիւն, Մերսոպ վարդապետ Գրիգորեանի տեսչութեամբ: Խումանիոյ, Տիրայր եպիսկոպոս Մարտիկեանի առաջնորդութեամբ: Պուլկարիոյ, Տիրայր եպիսկոպոս պատուայի առաջնորդութեամբ: Մարտիկեանի առաջնորդութեամբ: Հայրապետական պատուիրակութեանի առաջնորդութեամբ: Արտիկեանի առաջնորդութեամբ: Հայրապետ Կովկասի առաջնորդութեամբ:

3600. ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

Վազգէն Ա. կաթողիկոս իր անդրանիկ կոնդակը գրեց 1955 գեկտեմբեր 1ին, «Սէրն իւմ ընդ ամեննեսին ձեզ ի Քրիստոս Յիսուս» ընարանով ու զայն ուղղելով Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի եւ Կ. Պողոսյ պատրիարքութեանց ու անոնց ենթակայ հոգեւորապետութեան եւ վարչական եպիսկոպոս Սանթուրեանի: Նոր նախիջեւանի եւ հիւսիսային Կովկասի թեմ, առաջնորդութեամբ Խովովին:

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա ՊԱԼՃԵԱՆ

ետք իր սեպտեմբեր 30ի ընտրութեան եւ հոկտեմբեր 2ի օժման պարագաներն ու անոնց յարակից եպիսկոպոսական ձեռնադրութեանց եւ միւռոնօրհնէքի հանդիսութիւնները «Հայոց վերածնած Մայր Հայրենիքի ազատ երկինքին ու կենսատու արեւին տակ» (ԱՆՅ. 49), ան կը չեշտէր որ իր առջեւ կը բացուէին նոր յոյսերու դռներ եւ կեանքի նոր ճանապարհ: Խանդավառիչ կը գտնէր ծաղկեալ հայրենիքի նիւթեական եւ մշակութային վերաշնութեան հսկայ գործը, ու անոնց զուգահեռ հոգեւոր վերաշնութեան գործը որ ահա սկիզբ կ առնէր Ս. Էջմիածնէն: «Այստեղ, կ'ըսէր, կենդանի է հաւատքը, կենդանի է Միիթարիչն ու Փրկիչը մեր Քրիստոս մեր հաւատացեալ ժողովուրդի սրտին մէջ»: Արթուն եւ արի ըլլանք, կը յորդորէր, պահելու համար մեր եկեղեցին, հաւատքը եւ մեր հոգիներու փրկութեան ճանապարհը, չշտելով որ անսասան ըլլար մեր սիրոյ միութիւնը, ամբողջ եւ անխոռով: Կը չեշտէր որ հաւատացելոց մտքերը անյոյս եւ անել ճամբաներու վրայ չթափառէին: Կը թուէր իսկոյն իր նախաձեռնելիք գործերը մի առ մի, կազմակերպել Մայր Աթոռը, միաբանական նոր կեանք ստեղծելով, ու կեանքի կոչելով եկեղեցւոյ կանոններն ու աւանդութիւնները շնչարը ու կարգապահ գործընթացի համար: Վերանորոգել հայրենի հնարոյր սրբավայրերը, վանքերն ու եկեղեցիները, «ինչպիսին են Ս. Հոփիսիմէն, Ս. Գայեանէն, Խոր Վիրապը, Օշականը, Գեղարդը եւ ուրիշները» (ԱՆԴ. 50): Շարունակելով իր հայրապետական ծրագիրը, Վազգէն Ա. Կորոշէր հոգածու ըլլալ եւ անձմբ հետեւիլ Հոգեւոր Ճեմարանի մակարդակի բարձրացման, «որպէսզի ան առաւելագոյն չափով արգարացնէ իր գոյութիւնը»: Մայր Աթոռի «Էջմիածն» պաշտօնաթերթը կը ծրագրէր հրատարակել Մայր Աթոռի սեփական տպարանին մէջ, որ պէտք էր կառուցուէր խոստացուած նուէններու օգնութեամբ, ուր եւ պիտի տպուէին այլ պարբերականներ ու հոգեւոր եւ եկեղեցական գրականութիւն, երբ «Մայր Տաճարի զանգական յաղթական պիտի զօղանջնն եւ Հորիզոնն հորիզոն պիտի աւետեն թէ այստեղ կենդանի է Ս. Սեսրոպի ոգին եւ կանգուն Ա. Էջմիածնին» (ԱՆԴ. 51): Դաստիարակչական եւ լուսառութեան ծրագրին հպելէ ետք, նորընտիր կաթողիկոսը կակնարկէր նաև հոգեւոր կաճառի մը կազմութեան նպատակ ունենալով քննարկելու եւ ուսումնասիրելու հայ եկեղեցւոյ պատմութեան, աստուածարանութեան, իրաւունքի, մատենագրութեան

ու արուեստներու կալուածները: Իր ժամանակութիւնը կը յայտնէր նաև հայ եկեղեցին ու Մայր Աթոռը օժտելու «Սամանադրութեամբ մը եւ Կանոնագրքով մը Համաձայն հայրապետահաստատ կանոններու եւ մեր սուրբ աւանդութեանց»: Հայրապետական իր ժողորդ կուտար «օտարութեան մէջ» ապրող իր զաւակներուն սիրով եւ միաբան ապրելու բարձր պահելով հայու պատուական անոնց օրինապահութեամբ եւ արդարութեամբ, «Հայրենի վերածնունդի եւ վերայինութեան գիտակցութիւնը խարիսխ» նկատելով ընդմշտ: Առաջնորդներուն եւ հոգեւոր հովիներուն ուղղելով իր խօսքը, կաթողիկոսը կ'ակնարկէր անոնց «օծեալ եւ սուրբ ձեռքբրուն» որոնց միջոցաւ անոնք ի մի պիտի հաւաքին ցրուեալ հօտը հայ եկեղեցւոյ, եւ ինչ որ այդ ձեռքբրը կապէին, ոչ մէկ օտար ձեռք պիտի շփորձէր քակել զայն, եւ սիրուքի հայը պիտի մսար, պիտի ապրէր ու համեր փրկութեան ափը «իր սուրբ հաւատքի գորութեամբ»: Կը փակէր իր այս անդրանիկ կոնդակը յորդորելով որ հոգեւորականներ իմաստութիւնը ունենային միասնական ոգին վերստեղծելու, ինչպէս նաև հաւատարիմ մասրու աշխարհի խաղաղութեան մշտական գոյութեան, որպէսզի «մեր վերայինած Հայրենի օճախը այլեւ երբեք, երբեք չքանդուի, եւ անոր երդիքին տակ միշտ առատ ու անսպառ ըլլան հացը, լոյսը եւ երգը» (ԱՆԴ. 52): Վերոնշեալ ծրագիրներն ու հայրապետական թելադրանքները արդարեւ գտան իրենց անմիջական ընթացքը, չնորին հաւատաւոր, գործունեայ եւ մշտարթուն կաթողիկոսին, որուն մօտիկ ապագայի շինարարական եւ զաստիարակչական ձեռնարկութիւնները լիովին պիտի արդարացնէին երիտասարդ ու կորովի հայրապետին անսահանջ իղձերը:

3601. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԶԵԲՈՆԱՐԿԱՆԵՐ

Վազգէն կաթողիկոսի երկարատեւ գահակալութիւնը այլազան ուղղութիւններով նշանակալից եւ արդիւնաւէտ զարձաւ: Անսնցմէ ոմանք իր ձեռնարկած անսահութաց շնչարարութիւնները եղան, որոնց մաս կազմեցին Ս. Էջմիածնի մայրավանքի համալիրէն ներս եւ Հայաստանի տարածքին վրայ կատարուած նորակառոյց հիմնարկներն եւ հին չինքերու ու պատմական վանքերու վերանորոգումները: Ակնառու եղաւ մանաւանդ նոր վեհարանի անկարելի նկատուած վերստացումը Խորհրդային իշխանութեանց

Տ. Տ. ՎԱՂՋԻՆ Ա ՊԱԼՁԵԱՆ

ձեռքէն ու անոր հիմնովին ու բարձրորակ վերանորոգումը իր ընտրութենէն միայն երկու տարի ետք 1957 թուականին։ Այս բոլորի բարուք եւ մնայուն իրազործման համար Վաղջէն Ա.ի իմաստուն կարգադրութեամբ, իր նախաձեռնութեամբ եւ հրակով, Մայր Աթոռի առջնթեր կազմը ւեցաւ հայ անուանի ճարտարապետներէ բաղկացած յանձնաժողով մը որ մնայուն հանգամանք ստանալով յարատեւ ժակեց եւ իրազործեց մայրավանքն ներս եւ դուրս գտնուող եկեղեցիներու եւ վանքերու միարարական անյետածգելի աշխատանքները։ Արդէն իր 1955 թուի դեկտեմբեր 1 թուակիր կոնդակով ան ընդգծած էր թէ պիտի «տքնինք վերանորոգելու եւ վերադրութեր մեր հայրենի սրբավայրերը որոնք մեր հոգեւոր կեանքի սիւները կը հանդիսանան եւ զմայլելի յուշարձաները հայ ճարտարապետութեան» (74. էջՄ. Բ. 22)։ Կաթողիկոսի ձեռնախութիւնն ու յաջողութիւնը, Հակառակ Խորհրդային անկրօն դրութեան ներքեւ ըլլալուն, որ դիւրաւ պիտի չթոյլատրէր որեւէ կրօնական չնքերու վերստին կեանքի կոչուիլը կը կայանար իր բարձր զիրքին եւ մանաւանդ իրաւ քաղաքագիտ ու դիւնանագէտ մարդու իր կարողութեան մէջ, որուն շնորհի սկիզբէն իսկ ան կարողացաւ ստեղծել բնականոն յարաբերութիւն եւ համապատասխան վարմունք երեւանի եւ Մոսկուայի համայնավար իշխանութեանց հետ։ Նկատի ունենալ սա պարագան եւս. շնարարութիւնները միայն ու միայն վերանորոգութեանց կը վերաբերէին, եւ ոչ թէ նոյնիսկ մէկ նորակառոյց եկեղեցւոյ եւ կամ կրօնական ընոյթի կողոյ կառոյցի մը ի նորոյ կառուցման, բան մը որ գնապէս անկարելի էր այդ շրջանին։ Վաղջէն կաթողիկոսի խելամտութիւնն ու հարամտութիւնը կայացաւ այդ նոյն կէտին մէջ, այսինքն վանքեր, եկեղեցիներ, վանական համալիրէն ներս գոյութիւն ունեցող հին կառոյցներ, վերանորոգելու պահանջքին ներքեւ, կատարել հսկայ շնարարական աշխատանք, առանց մասնաւոր կարիքն իսկ յայտնելու նոր եկեղեցւոյ մը շնորհեան։ Այս կերպով, վերանորոգեալ հին եկեղեցիները արդէն սկսան ծառայել որպէս ծխական եկեղեցիներ, որքան ատեն որ անոնց շուրջ կամ մօտ մնայուն բնակչութիւն կը տիրէ։ Կաթողիկոսին հրաէրով 1957 թուականին կազմուեցաւ եօթ հոգինոց ճարտարապետներու յանձնաժողով մը, որուն մաս կազմեցին Մարտիրոս Սարեան, յայտնի նկարիչ ար-

ևստագէտ, պատուոյ նախագահ, ճարտարապետ Միքայէլ Մազմանեան, «Երեւանախագիծ» արտեստանոցի վարիչ եւ անդամ Գերազոյն Հոգեւոր Խորհուրդի, Փրոֆ. Կարո Ղափաղարեան, պատմարան եւ հնագէտ, ճարտարապետ Վարազգատ Յարութիւնեան, նախագահ Հայաստանի ճարտարապետներու միութեան, ճարտարապետ Ռաֆայէլ Իսրայէլեան, Հայաստանի պետական համարարանի դասախոս, ճարտարապետ Կոնստանդիին Յուվհաննիսիսեան, ու բարտագէտ և հութիւններու պահպանութեան վարիչ եւ դասախոս, ճարտարապետ Բաղդիկ Արգումանեան, «Երևանախագիծ» արտեստանոցի վարիչ։ Սոյն յանձնաժողովը, որուն հերթական նիստերուն մասնակցեցաւ նաեւ նկարիչ Գրիգոր Խանջեան, ամսական կանոնաւոր հանդիպում ունեցաւ էջմիածնի վեհարանին մէջ, նախագահութեամբ Վաղջէն կաթողիկոսի։ Արտասահմանի բարերարներ եւ բարեսիրական, հայրենակցական եւ մնայուն հիմնադրամներ գործնակցն քաջալիեցին Մայր Աթոռի շնարարական ձեռնարկները աննախընթաց գումարներ հասցնելով անոնց իրազործման համար, ինչպէս նաեւ անձամբ հայրենիք այցելելով ու տեսնելով կատարուած շնարարական աշխոյժ աշխատանքը։ Յանձնախումբի աշխատանքները հետեւեալ պատկառելի արդիւնքը տուին առաջին տասնամեակին, որ ինքնին պերճախօս է ապագայի նկատմամբ։

Մայր Տաճարէն ներս.

Մարմարապատում սալայատակի, կառուցում մարմարեայ Աւագ Սեղանի, վերակառուցում տաճարի հարաւային փլած գմբէթի, ձեւաւորում Աւագ Սեղանի տեղ յայտնաբերուած հեթանոսական կրակարանի, վերանորոգում հիմերու եւ արտաքին պատերու, կառուցում դասի մարմարեայ բազրիքներու, շրջարակի սալապատում, ստորերկրեայ ջրանցքներու վերականգնում, տաճարի լման տանիքի կապարապատում, գուներու եւ պատուհաններու երկաթեայ շրջանակներու կառուցում։ Այս բոլորը՝ Գալուստ Կիւլիկիսկան կտակի յատկացումներով (65. էջՄ. մԱ. մԲ. 27):

Մայրավանքէն ներս

Վանքի շուրջը սրբատաշ տուփ քարերով պանքի կառավագանքում, ամրողական հիմնական պարապատում, ամրողական պատկան պատուհաններու յանձնաժողով մը, որուն մաս կազմեցին Մայր Աթոռին վերադրուեցաւ Վաղջէն

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա. ՊԱԼՃԵԱՆ

կաթողիկոսի խնդրանքով 1957 թուականին, ամբողջական վերանորոգում տապարանի չնքին, հիմնական վերանորոգում Խրիմեան չնքին, կառուցում ժամացոյցի աշտարակին վանքին հիւսիսակողմը, վանքին գլխաւոր մուտքին դարպասի կառուցում, Տրդատի Դրան վերանորոգում, Կեղրոնական շեռուցման եւ բոլոր չնքերուն համար ջրամատակարարման եւ կոյուղիի կառուցում, ծառապատում:

Ա. Հոփիփսիմէի տաճար

Հիմնական վերանորոգում տաճարի եւ կառուցում նոր Սեղանի, բարեկարգում շրջապատի եւ այգիներու տնկում, պարսպապատում տաճարի եւ կառուցում նոր դարպասի, կառուցում յուշարձան-աղբիրի:

Շողակաթ Եւ Օշական

Շողակաթի տաճարի վերանորոգում, Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցւոյ հիմնական նորոգում, նոր Սեղանի կառուցում եւ ներքին նկարազարդում, Սուրբ Մեսրոպ Մեծ Վարդապետի դամբարանի բարեկարգում: Օշականի եկեղեցւոյ ներքին որմանակարներու ի նորոյ իւղաներկում թարգմանչաց յատուկ, ինչպէս նաև արտաքին շրջապատի հիմնական վերայարդարում:

Բջնի, Խոր Վիրապ, Գեղարդ

Հիմնական վերանորոգում Բջնիի Ս. Աստուածածին եկեղեցւոյ, Ս. Գայեանէի վանքին, Խոր Վիրապի վանքին, Միսեանի եկեղեցւոյ գմբէթի, վերանորոգում Գեղարդայ վանքին:

Այլ Վերանորոգումներ

Եղեգնաձորի Ս. Խաչ վանքի, Երեւանի Ս. Սարգիս, Ս. Յովհաննէս, Ս. Զօրաւոր եկեղեցիներու, ինչպէս նաև Լենինականի Ս. Աստուածածին տաճարի: Պարսպապատում Մայր Աթոռի միարանական պատմական հին գերեզմանատան եւ վերանորոգում Կամո (Նոր Պայազիտ) քաղաքի եկեղեցւոյ:

Նահատակաց Յուշարձան

Գեղարուեստական կոթող մը եղաւ ինքնին էջմիածնի վանքէն ներս 1965 թուին կառուցուած 1915ի Մեծ Եղեռնի յիշտակին նուիրուած յուշարձանը, ճարտարապետութեամբ Ռաֆայէլ Խորայէլեանի եւ քանդակագործութեամբ Արայիկ Յարութիւնեանի: Ցուշարձանը տաղանդաւոր համադրութիւն

մըն է այլազան չափերով եւ տարրեր գծագրութեամբ իրարու ագուցուած խաչքարերու, հին տաճարներու քանդակներու նմոյներով զարդարուած:

3602. ՎԱԶԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՒՂԵՇՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շնորհիւ իր յաճախակի եւ հեռաւոր ճամբորդութեանց, Վազգէն Ա. Եղաւ իրեն ժամանակակից դէպքերու եւ դէմքերու ուղղակի եւ անձնական մասնակիցն ու հազրդակիցը, ըլլան անտնք օտար եկեղեցական բարձրաստիճան դէմքեր եւ կամ պետական առաջնակերթ անձննք: Իրեն վիճակուեցած եռանարկելու իսկապէս աննախընթաց շարք մը ուղեւորութեանց, ներքին, եւ մանաւանդ արտասահմանեան թեմերու, մօտէն ծանօթանալու համար ինչպէս հայրենիքին նոյնակու եւ սփիւռքի հայութեան եկեղեցական թեմական եւ ազգային կեանքին, ծրագրելով իր հերթական հովուապետական այցելութիւնները հայ եկեղեցւոյ նուիրապետական աթուներուն, Վատիկան, Անգլիա, Կ. Պոլս. Հնդկաստան, Գաճիրի, Եթովպիփա, Զու իցերիա, ինչպէս նաև ի սփիւռս աշխարհի ցրուած հայ եկեղեցւոյ բոլոր թեմերուն: Հայաստանեաց եկեղեցւոյ պատմութիւնը հիացումով պիտի արծանագրէ Վազգէն Ա. ի չորս ցամաքամասերուն տուած իր ուղեւորութիւնները իրենց ետին թողած արգասարեր եւ մայրու արդիւնքներով: Առաջին կաթողիկոսը պիտի ըլլար Վազգէն որ պիտի այցելէր Տանն Կիլիկիոյ պատմական Աթոռը եւ բազմէր Անթիլիասի կաթողիկոսանիստ Աթոռին վրայ իր գահակալու թեմէն մի քանի ամիս ետք, եւ շտուվ պիտի անցնէր Ատլանտեան ոսկիանոսը այցելելու համար նոր Աշխարհի ցրուեալ իր հոտը: Վազգէն Ա. կրցաւ իր երկարատես գահակարութեան ընթացքին տասնէ աւելի արտասահմանեան այցելութիւններ տալ ու այցելել հայրապետական բոլոր թեմերը աշխարհի չորս ծագերուն: Գլխաւոր պատմաները երկուք էին: Սփիւռքահայութիւնը այլեւս մեծագոյն զանգուածը կը կազմէր հայութեան, հայրենիքին զուրաց, որուն կապը Հայաստանի հետ պիտք էր յարատեւ զօրանարեւ եւ երկրորդ, ճամբորդութեանց արագընթաց միջոցները, որոնք տրամադրելի չէին նախորդ կաթողիկոսներուն ժամանակ, ընծայեցին լաւագոյն պատեհութիւնը կարճ ժամանակի մէջ հասներու հեռաւոր ափերը Ատլանտեանի եւ Խաղաղականի: Իր ճամբորդութեանց ընթացքին կաթողիկոսը ոչ միայն առաջին

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա. ՊԱԼՃԵԱՆ

անգամն ըլլալով անձամբ ներկայացուց ամենայն հայոց հայրապետն ու կաթողիկոսութիւնը, այլ նաև ուղղակի եւ անձնական յարաբերութիւն մշակեց օտար յարանուանութեանց պետքերուն հետ, հրատիրելով զանոնք այցելելու Ս. էջմիածնի նախամեծար Մայր Աթոռը: Հայրապետական շրջագայութիւնները նիւթապէս ալ նպաստեցին Մայր Աթոռի շինարարական ծրագիրներուն. երբ Վազգէն Ա. իր հմայքով եւ խելամուտ մօտեցումով աննախընթաց գումարներ հասցուց արտասահմանեան հիմնարկներէն եւ նուիրատու բարերարներէն. բարեզարդելու համար Մայր Աթոռն ու Հայաստանի հին վանքերն ու ծխական եկեղեցիները:

3603. ՊԱՂԵՍՏԻՆ ԵՒ ԻՄՐԱՅԷԼ

Համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին, 1917 նոյեմբեր 2ին, անգլիացիք Պաղեստին մտան եւ դուրս չպրտեցին Օսմանեան թուրքերու վերջին րանակը: 1920ի ապրիլին, երբ Ման Ռեյնոյի խորհրդաժողովը տեղի կունենար, Մեծն Իրիտանիա իր վրայ վերցուց Պաղեստինի հոգատարութիւնը, որ իր կարգին երկու տարի ետք բաժանում ստեղծելով տուեալ տարածքաշրջանին վրայ. ստեղծեց Անդրյուդանանի պետութիւնը, միեւնոյն ատեն մնացեալ բաժնին վրայ խոստանալով ստեղծել հրեայ ժողովուրդին համար ազգային հողամաս, ուր մինչեւ 1948 թուական 450 հազարէ աւելի հրեաներ ներգաղթեցին. նպատակ ունենալով ստեղծելու իրենց ուրոյն պետութիւնը Իսրայէլ, որ գոյութեան եկաւ 1948 թուականին: Արար եւ հրեայ տարրերուն գոյակցութիւնը Պաղեստինի տարածքին վրայ եղաւ եւ մնաց միշտ թշնամական նոյնիսկ մինչեւ հետագայ տասնամեակներուն: Անգլիացուց քաղաքականութիւնը, որ յայտնօրէն զօրագիր կը կանգնէր հրէական գաղութիւն եւ անոր յառաջիկայ ծրագիրներուն, ընականարար արաբներու դժգոհութիւնը յառաջացուց: Արաբներ ապատամբեցան գաղութարարներու դէմքանիցու, 1920 թուականին սկսեալ մինչեւ 1939, ստիպեցնելով որ Անգլիա դադրեցնել տար հրեաներու իրերայաջորդ գաղթը դէպի Պաղեստին: Հրեաներ այս անգամ դժգոհ մնալով Անգլիոյ բռնած դիրքէն, հակեցան դէպի Միացեալ նահանգներ, երբ արդէն հակամարհայի միջեւ: Զգտեալ այս վիճակը համարհային ամերիկայի միջեւ:

տկարութեան մատնեց Անգլիոյ ներկայութիւնը մերձաւոր արեւելքի մէջ, եւ Անգլիա 1947 թուականին արաբ-հրեայ կնճիռը Միացեալ Ազգերու Կազմակերպութեան քընութեան ենթարկեց, որ իր կարգին նոյեմբեր 29ին որոշեց դադրեցնել անգլիական հոգատարութիւնը Պաղեստինի վրայէն, նպատակ ունենալով ստեղծելու տնտեսապէս իրար հետ կապուած երկու անկախ հրէական եւ արաբ-ական պետութիւններ, առանց Երուաղիմը միացնելու մէկուն կամ միւսին, այլ որպէս իրայատուկ վարչական միաւոր ձգելու Միացեալ Ազգերու Կազմակերպութեան հոկողութեան ներքեւ: Որպէս ծրագրուած հետեւանք այս բոլորին, 1948 մայիս 15ին Իսրայէլի պետութիւնը ստեղծուեցաւ, մինչ պաղեստինի արար ժողովուրդը չկարողացաւ իրագործել ինքնանկախ պետութիւն ստեղծելու իր իրաւունքը, եւ ասոր հետեւանքն ալ եղաւ 1948-1949ի արաբական եւ իսրայէլեան պատերազմը: Միացեալ Ազգերու Կազմակերպութեան որոշմամբ Պաղեստինի տարածքին կէսէն աւելին, ներառեալ Երուսաղէմի արեւետեան մասը, անցաւ Իսրայէլի պետութեան: Նոյն կարգադրութեամբ 1950ին Պաղեստինի արեւելեան շրջանները, Յորդանան գետի արեւետեան ափը, ինչպէս նաեւ Երուսաղէմի արեւելեան մասը կցուեցան Յորդանանի պետութեան. իսկ Կազայի շրջանը անցաւ Եղիպատոսի հսկողութեան տակ: Միացեալ Ազգերու սոյն կարգադրութիւնը անկարելի էր որ անմիջական եւ նոյնիսկ հեռակայ խաղաղութիւն խոստանար տարածքաշրջանին մէջ, որովհետեւ հրեաներ իրենց հայրենիքը առաւելագոյն չափով եւ քաղաքական ապահով սահմաններով հաստատել որոշեր էին, տնտեսական կապերն ալ արեւմուտքի հետ սերտացնելով, ի գին ամէն զոհողութեանց, ի հեճուկս եւ ի վնաս անշրջտ դրկից արաբներուն, որոնք մեծ թիւրով, հարիւր հազարներով, կը բնակէին Պաղեստինի մէջ որպէս բնիկ ժողովուրդ: Իսրայէլի զինեալ ուժերը, իրենց ձեռք անցած տարածքներէն իսկոյն վտարեցին 900 հազար պաղեստինցի արաբներ, որոնք իր գաղթական զուրս եկան հրեաներու հողերէն, ստեղծելով գաղթականութեան մնայուն եւ անրուծելի հարցը մերձաւոր արեւելքի մէջ: Այս Գաղթականութեանց մէջ դժբախտ բաժին մըն ալ հայերուն ինկաւ, որոնք ստիպուեցան լքել տուն ու տեղ եւ մեկնիլ Լիբանան եւ Միացեալ նահանգներ, ուր ուսմանց հետեւելով դարձան պատուաւոր քաղաքացիներ միշտ Երուսաղէմը նկատելով իրենց հոգեկան ծննդավայրը:

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա. ՊԱԼՃԵԱՆ

3604. ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԸ

Երբ անգլիական ուժերը կը քաշուէին իրենց դիրքերէն ու զանոնք մաս առ մաս կը յանձնէին հրեաներուն եւ արաբներուն, երկուստեք թշնամութիւնը կը ծաւալէր եւ բազմաթիւ ցոյցերու եւ արիւնալից բախումներու տեղի կուտար: Անգլիական ինամատարութեան վերջաւորութեան եւ իսրայէլի պետութեան ստեղծման օրերուն քաղաքացիական խուլ արիւնուն եւ անինայ պայքար ծայր կուտար, իր ետին ձգելով թշուառութիւն եւ քանդում, որոնց անմիջական թիրախ պիտի դառնար նաեւ Երուսաղէմի հայութիւնը: Վանքն ու դէպի վանք խուժող անվերջ շարքերը գաղթականներուն անուղղակի յարձակումներու ենթարկուեցան, ու վանական ներքին կառոյցներ ուռումքերու հարուածներու տակ վտանգալից տարիներ անցուցին: Աւելի քան 3000 հայեր, արդէն ամիսներ առաջ վանք եկեր էին ու բնակութիւն հաստատեր վանքապատկան պատսպաններու մէջ, իսանգարելով միաբանական ներքին կեանքը ու վանական իւրայստուկ դրութիւնը: Օրուան պատրիարքն էր Կիւրել Բ. իսրայէլեան, որ տնօրին ժողովի որոշմամբ կազմակերպեց մի քանի յանձնախումքեր, հոգեւորականներով գլխաւորւած, որոնք ստանձնեցին պարենաւորման, կարգապահական եւ առողջապահական հոգատարութիւնները: Պատրիարքի անմիջական ցուցմունքներով անոնք մննդեցնի եւ առողջապահական պիտոյքներ հայթայթեցին, որմէ ետք հանգանակիչ մարմիններ կազմուեցան գոյացնելու համար անհրաժեշտ նիւթական կարիքները: Պատրիարքը իր յատուկ կոչով դիմեց համագաղութային միութեանց իրենց օժանդակութիւնը խնդրելով: Առաջին առիթով ան խնդրեց Տանն Կիւլիկոյ Գարեգին Ա. կաթողիկոսին որ կոնդակով մը իր կոչն ալ միացնէր նոյն անյետաճգելի նպաստակին համար: Խնդրուեցաւ նաեւ Հայկական Բարեգործական Հնդկանուր Միութենէն եւ եգիպտակայ թեմէն որ իրենց կարգին ընէին իրենց կարելին, միշտ շշտելով վերաբաս եւ տակաւ հասունցող վտանգն ու թշուառութիւնը: Երբ շարաթ օր, մայիս 15ին, վերջ կը գտնէր անգլիական հոգատարութիւնը, Երուսաղէմի սահմաններուն վրայ կատաղի ընդհարումներ տեղի կ'ունենային, հրազդններու եւ ռումքերու շարունակական արձակումներով, սարսափի մատնելով բոլոր ժողովուրդը: Կիրակի 16ին, հայոց վանքը սարսափի կը մատնուէր ռմբա-

կոծումով եւ անխնայ քնդումով: Կիւրել պատրիարք անձամբ, եւ սակայն ի զուր, կը դիմէր քաղաքի իշխանութեանց որ ինային վանքին ու անոր կամարներուն տակ պատսպարեալ ինեղն հայութեան: Նոյն երեկոյեան աւելի բուռն կերպով կը չարունակուէր կուրմէր ընդմէջ արաբներուն եւ հրեաներուն, և Սրբոց Յակոբեանց վանքը, որ սահմանագրութիւնուն եւ կուրմէր թեանց վանքը կը մասր ընդմէջուն: Համաձայն տրուած վանական տեղի կուրմէր թեանց, «Հայիս 17-18 արիւնի, սուզդի եւ տրումութեան օրեր եղան բովանդակ Սիարանութեան եւ Հայ հասարակութեան համար» (48. Սի՛. 175): Վանքէն ներս միայն այդ երկու օրերուն 36 վիրաւորներ պատահեցան, որոնցմէ երեքը իսկոյն մեռան: Պատրիարքը դարձեալ կը դիմէր պատկան իշխանութեանց եւ Կարմիր համբաւ ինդրելով որ ինայուի հայոց վանքին ու պատսպարեաներուն, երբ արդէն կուներուն գլխաւոր թիրախի հայոց վանքը կը հանդիսանար: Առաջին հաշիներով, նոյն այդ օրերուն, վանքէն ներս պիտի ինամուկին աւելի քան 200 վիրաւորներ, 65ը անոնցմէ օտարներ, եւ պիտի զարմանուէին 3730 ինամքի կարօտ վիրաւորեաներ: Տագնապի այդ օրերուն, Անդրյորդանանի բանակը հին քաղաք կը մտնէր եւ կը գրաւէր քաղաքի պարիսպներն ու ամրոցները, այդ կերպով հսկելով հայոց վանքին վրայ եւ նոյնիսկ Ս. Թարգմանչաց վարժարանն ու ժառանգաւորաց թաղը առժամեայ զօրանոցներու վերածելով: Ողյուն միջամտութիւնը վանական իշխանութեանց կողմէ կը նը կատուէր «Աստուծոյ ամենազօր ու պահապան աջը» Սրբոց Յակոբեանց դարաւոր վանքին վրայ: Հնդհանուր այս տագնապին մէջ վանքին միաբանութիւնն ու հազարաւոր պատսպարեաներ խուճապահար ներքնայրելով ծուարած ելքի մը կը սպասէին, երբ մանաւանդ արտաքին յարաբերութիւններն ալ անկարելի կը դառնային, քանի որ խորտակուած էին հին քաղաքի հեռածայային եւ լոյսի բոլոր կապերը: Դադրած էր նաեւ չուրի մատակարարումը: Մայիս 20ի կէս գիւղին ռումք մը կ'իյնար վանքի Ս. էջմիածին եկեղեցւոյ տանիքին վրայ, հիմնովին ցնցելով կառոյցն ու զանգակատունը: Խումքեր կիւնային նաեւ լուսարարապետարանի շուրջ պարտիզաթաղի եւ ժառանգաւորաց թաղին վրայ: Մայիս 22 էն 25 ռմբակոծումները կը շարունակուէին «գիշեր ու ցերեկը», Կիւլաշէնկեան Մատենադարանին շուրջ, քանդելով

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա. ՊԱԼՃԵԱՆ

ճակատի մասը, ուրիշ ռումբ մըն ալ կ'իյնար վանքի բակին մէջ վիրաւորելով «Ըւնճեան ընտանիքի բոլոր անդամները, որոնցմէ մին փոքրիկ Անահիտ, կը վախճանէք» (ԱՆԴ 176); Մայիս 27ին Անդրյորդանանի Ապտուլլա թագաւորը իր հետեւրդներով Ա. Յարութեան տաճարը կայցելէր, ուր յոյն, հայ եւ լատին պատրիարքներու ներկայացուցիչներէն կը դիմաւորուէր: Յաջորդ օր հին քաղաքին մէջ կղզիացած հրէական թաղը կը յանձնուէր Անդրյորդանանի հրամանատարութեան: «որուն պատճառաւ մեր վանքը մասամբ այլեւս կը դադրէր պատերազմական սահմանագլուխ ըլլալիք» (ԱՆԴ): Մայիս 28ի յաջորդող օրերուն Երուսաղէմի ոմբակոծումները պահ մը կը դադրէին, երթեւեկութիւնը կը գերսկէր ու վանքաբնակ ունեւոր հայեր դէպի Ամման եւ Պէրութ կը գաղթէին: Խակ վանք մնացող չքաւոր դասակարգը հաց եւ պարեն կը ստանար Միւռոն վարդապետ Կրծիկեանի գլխաւորած մատակարար մարմնին միջոցաւ: Յունիս 3ին սակայն ոմբակոծումը սաստկացաւ, վիրաւորներ դարմանուեցան եւ գեղօրայք հասան Պէրութէն եւ եգիպտոսէն: Խակ 15ին մէկ ամսուայ զինաղուլի պատեհութեամբ որոշ չափով կը խաղալէր կացութիւնը: Այդ օրերուն Համբարձման եւ Հոգեգալյատեան աւանդական տոները պաշտըւցան Ա. Յակոբեանց մայր տաճարէն ներս, փոխանակ Համբարձման լերան վրայ եւ Ա. Փրկիչ եկեղեցւոյ մէջ: Ա. Փրկիչ եկեղեցին իրեւ պատերազմական դիրք կը ծառայէր հրեաներուն: Ռմբակոծումներուն զոհ գացած էն երկու աշխատաւոր միաբաններ՝ Յարութիւն Աստուրեան եւ Աւետիք Բոլյատեան, ինչպէս նաև տասնըմէկ վանքաբնակ հայեր: Խակ եափայի մէջ զոհ գացած են շրբ հայեր, եւ հինգ ուրիշներ ալ Հայփայի մէջ: Վերոյիշեաներուն բոլոր անունները ցուցակագրուած են «Միոն» ամսագրին մէջ (ԱՆԴ 178): Ամիսներ շարունակ չդադրեցան երկուստեք ոմբակոծումները Երուսաղէմի վրայ: Յուլիս 16ի դիշերուան մահասփիւռ ոմբակոծումները եղան յունեգոյնը իրենց տեւողութեամբ եւ պատճառած մահերով եւ քանդումներով: Եօթը ժամ ամբողջ քաղաքը ենթարկուեցաւ թնդանօթներու եւ հրազններու հարուածներուն: Հայոց վանքին վրայ նոյն այդ գիշեր ինկան հարիւրէ աւելի ուռմբեր, համատարած վնասներ պատճառելով: Յուլիս եւ օգոստոս ամիսներուն երեք վանքաբնակ հայեր՝ Մանուկ Սէրյայտարեան, Փարամազ Տ. Ղազարեան եւ Երուանդ Զաքարեան, զոհ գացին վանքին վրայ ինկած ուռմբերուն: Սեպտեմբերին

գերսկան ոռւմբերը տեղալ Երուսաղէմի Դաւիթի, Յոպաէի, Դամասկոսի եւ Նոր Դրան մուտքերուն շուրջ որոնցմէ առաջինը ատ մօտիկ էր հայոց վանքին: Սեպտեմբեր 10ին Ապտուլլա թագաւոր վերահաստատեց Երուսաղէմի զինուորական ուժերը ընդհանուր հրամանատարի մը նշանակումով փոխան նախկինին: 11ին սաստկացան ոմբակոծումները, եւ երկու օր ետք առաւօտ կանուխ խոչը ուռմբը մը հայոց վանքի աւագ դրան առջեւ իյնարով վիրաւորեց 30 անձեր: ծանրապէս վիրաւորելով երկու հայ քոյրեր, յայր մը եւ անոր աղջիկը: Չորսն ալ մեռան հրանդանոցին մէջ: Նոյն օր ոմբակոծեցին նաեւ Ա. Յարութեան տաճար առաջնորդող փողոցը ուր կար ոսկերիչներու շրկան: Երեք հայորդիներ իսկոյն զոհ գացին տեղույն վրայ: Երիտասարդ զոհերու եօթ զագաղներ միեւնոյն օրը յայր տաճար բերուեցան ուր սրտածմիկ յուղարկաւորութիւնը կատարուեցաւ: Սեպտեմբեր 17ին Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Պաղեստինի հարցի բանակցութեանց որպէս միջնորդ Երուսաղէմի գտնուող Գօնթ Պերնատօթ եւ ՄԱԿ-ի Երուսաղէմի գլխաւոր քարտուղար Գնդապետ Անտրէ Սիրո սպաննուեցան նոյն օրուան ոմբակոծումներու ընթացքին: Հայոց Կիւրեղ պատրիարք Պերնատօթի հետ տեսակցած էր յուլիս 29ին Երուսաղէմի մէջ, ուր կանչուած էին Ա. Տէղեաց երեք հոգեւոր պետերը ու անոնց ներկայացուցիչները:

3605. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

Երուսաղէմի հայոց Կիւրեղ պատրիարք բազմից գիմումներ կատարած էր հայ եւ միջազգային կազմակերպութեանց մօտ, երբեմ Երուսաղէմի երեք կրօնապետները միասնաբար, անմիջական օգնութիւն խնդրելով տառապեալ եւ վտանգեալ քրիստոնեան համար որոնք հրեաներու եւ արարներու բուռն կոխներու ընթացքին անել կացութեան մատուած էին, կեսնքերնին վտանգի տակ, բնակարանէ եւ մոնունդ զուրկ գաղթականի իրաւ տուայտանքներու ենթակա: Պատրիարքը նախ գիմած էր Տանն Կիւրեղիոյ Գարեգին Ա. Կաթողիկոսին կոնդապակ մը օգնութիւն հայոցելով հայ եկեղեցւոյ թեմերէն: Իր 1948 ապրիլ 24 թուակիր կոնդապակ (48. ՍԻ. 145-146) կաթողիկոսը կը դիմէր «ամենայն առաջնորդ եպիսկոպոսաց, թեմական իշխանութեանց եւ հաւատացեալ ժամանական հիմանութեանց եւ հաւատացեալ ժողովրդեան», Պաղեստինի մէջ յառաջ եկած նիւթական եւ բարոյական ծանր վնասներու

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա. ՊԱԼԱՑԵԱՆ

բարձման անմիջական օգնութիւն խնդրելով։ Կը յիշեցնէր Կիւրեղ պատրիարքի գրաւոր հաղորդագրութեսէն նկարագրուած Երուսաղմի ծանր վիճակը ու վանքէն ներս պատապարեալ հայ ժողովուրդի տագնապալից կացութիւնը, նշերով 1800 հայերու վանք ներխուժումը ու 700 հոգիներու ալ դուրսը անտուն մասցած ըլլալը։ Մնունդի հարցը առաջնահերթ նկատելով, Գարեգին կաթողիկոս կը մատնանչը լրիւ անգործութիւնն ու ունեւորներու հապճեկ հեռացումը Երուսաղմին զէպի Կիպրոս, Լիբանան և Սիւրիա։ Կոնդակի վերջաւորութեան դիմերով իրեն ենթակայ թեմերուն, Դամասկոս, Հայէպ եւ Կիպրոս, կաթողիկոսը կը յանձնարարէր տեղական ժողովներ կազմել շուտով, «Պաղստինի Հայերին Եղայրական Օգնութիւն» անունին տակ ու հանգանակութեանց ձեռնարկել, դրամ, սուսնդ եւ դեղօրայք հասցներու համար հայոց պատրիարքարան։ Նոյն տարուոյ ապրիլ 30 թուակիր պաշտօնագրով երեք յարանուանութեանց պետերը Աթենակարաս յունաց, Ալպէրթօ Կորի լատինաց եւ Կիւրեղ Բ. հայոց, Պաղստինի բարձր քոմիսերին գրած են ազգու նամակ մը, խնդրելով որ իրենց կոչը հասցնէ Մեծն Բրիտանիոյ արքայական պալատին, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան, որպէսզի անմիջական քայլ մը առնէին տագնապալից այդ օրերուն վտանգի ենթարկուած սրբատեղեաց եւ եկեղեցիներու ապահովման ի նպաստ, երկու կէտեր յանձնելով իրենց ուշադրութեան։ Նախ, որ Երուսաղմի մէջ սիրող պատերազմական վիճակին հետեւանքով Ա. Տեղեաց պաշտպան եկեղեցականներ կը հեռանային իրենց պաշտօններէն ստիպողարար, բոլորին լքելով դարերու կեանք ունեցող քրիստոնէական սրբավայրերը։ Երկրորդ, անմիջական քայլեր առնուէին որպէսզի երբ անգլիական հոգատարութիւնը դադրէր Պաղստինի վրայ, Երուսաղմի պիտի հովանաւորուէր անպայման հեղինակաւոր վարչութեան մը կողմէ, ազատել կարենալու համար սրբատեղիներն ու վանական հաստատութիւններու վերջական կարգութիւնը 1948 յունի 10 թուակիր իր պաշտօնագրով, Կիւրեղ պատրիարք կը գրէր ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդին եւ ցաւով կը յայտնէր թէ Ս. Յարութեան տաճարը, սրբա-տեղիներն ու վանքերը, կրօնական եւ բարեսիրական հաստատութիւնները, բոլորն ալ ումբակոծման կ'ենթարկուէին, լուրջ վնասներ պատճառելով։ Պատրիարքը կը խնդրէր անմիջական եւ վճռական քայլեր առնել եւ

ապահովել անվտանգութիւնն ու անդորրութիւնը սուրբ քաղաքէն ներս։ Պատրիարքը սրտագին կոչ մըն ալ կուղղէր 16 մարտուակիր նամակով՝ ուղղեալ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նիւերքի կերպնական վարչութեան ընդհանուր քարտուղար Գրիգոր Կիրակոսանին, բացաւրելով Երուսաղմի տագնապն ու տնտեսական լուրջ դժուարութիւնները, խնդրելով միանգամայն Միութեան «աջակցութիւնն ու դրամական անմիջական օգնութիւնը վերահաս աղէտներէ փրկելու համար Հայութեան պանծալի» ժառանգութիւնները ի Ս. Յակոբ եւ հայոց պատրիարքութիւններան սրբատեղեաց մէջ։ Պատրիարքը կը շետքի թէ քաղաքական լարուած վիճակը եթէ շարունակուէր, հիմնայատակ կրնային կործանուի վերջին երեսուն տարիներու վնարարական աշխատանքներն ու արդիւնքները (48. ՍԻ. 181)։ Ան կ'ողբար սրտակեղէք վիճակը հայ գաղթականներուն, որոնք կ'ապաստանէն վանքի ներքին եւ արտաքին թաղերուն մէջ «հաւասարապէս վտանգուած եւ յուսալըռուած»։ Պատրիարքարանի գլխաւոր կալուած եղող քաղաքամիջի Ռեքս անուան շարժապատկերի սրահը, որ «մեր լաւագոյն չխնֆերէն մին էր», կործանած էր ըոլորովին։ Աւելին, հրոյ ճարակ դարձեր էին վանքապատկան եօթը խանութիւնները եւ անոնց վրայի պանդոկը «որ մեր եկամուտի մեծագոյն աղբիւներէն էլ»։ Որպէս «շատ ցաւալի աղէտ մը», Կիւրեղ պատրիարք կը տեղեկացնէր թէ Գեթսեմանի Ս. Աստուածածնի գերեզմանի հնադարեան եկեղեցին, որուն գաւիթն ու մուտքը վերականգնուած էին մի քանի ամիսներ առաջ, 1948 յունուար 5ին յանկարծական անձրեւներու հետեւանքով հեղինեներու ենթարկուած էր, խորտակելով անոր մուտքն ու նորոգեալ գաւիթին պատը, ինչպէս նաեւ ներքին հայ եւ յոյն պատրագամատոյց խորանները, կանթեղները, սրբապատկերները, ջաներն ու պահարանները, բոլորն ալ հաւասարապէս ի վնաս բաժնեկից հայ եւ յոյն պատրիարքութեանց։ Եղած խնդրանքին որպէս անմիջական օգնութիւն, Հ.Բ.Ը. Միութիւնը 5000 պաղետինեան ուկիի մասնաւոր յատկացում մը կը կատարէր եւ դեղօրայք կը լրէր Կիւրեղ պատրիարքի կաթողիկոսութեան միաբան նորէն եպիսկոպոս Բարոյեանի անձամբ Երուսաղմի այցելութեամբ, զորս պատրիարքը ստացեր էր յունիսի առաջին շաբթօւն, «Երախտապարտ մնալով սիրելի Բարեգործականին անսահմանօրէն», ինչպէս Կիւրեղ Բ. կը գրէր իր 15 յունիս թուակիր երկար եւ մանրամասն

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՊԱԼՃԵԱՆ

նամակին մէջ (ԱՆԴ 184-187): Հսուած էր նաեւ թէ յիշեալ գումարին 4000 ռուփին յատկացուցեր էին պարէնի եւ դեղօրայքի: Պատրիարքը մանրամասնօրէն կը տեղեկացնէր կրիսներու հետեւանքն եղող կործանումներն ու մահերը, գաղթն ու դժբախտութիւնները, միաբանութեան եւ խնամատար յանձնախումբերու, դարմանատան եւ հայ բժիշկներու կատարած անխոնչ եւ չորհակալ աշխատանքը, որոնց մասին անդրադարձն նախորդիւ: Անձամբ Երուսաղէմ եկած են այդ օրերուն իրենց նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը հասցնելու համար Անթիլիասի կաթողիկոսարանին Խորէն եպիսկոպոս Բարոյեան, երկրորդ անգամ ըլլալով, եւ Գահիբէն իրաւարան Շաւարշ Անելյօնքեան, մատուցաներու համար կիրանանի եւ Կիլիկեան թեմերու նիւթական յատկացումները (15,000 սիւրիական սոկի), ու Եգիպտոսի թեմին հաւաքած դրամական օժանդակութիւնը: Պատրիարքն ու միաբանութիւնը մեծապէս միխթարուած զգացեր էին եպիսկոպոսին եւ իրաւարանին անձնական ներկայութեամբը:

3606. ԱԱԱՐԺԷՔ Վէճ ՄԸ

Մինչ Երուսաղէմ եւ սրբավայրեր ու բակուման ենթակայ էին եւ տակաւին քաղաքական գետնի վրայ ընդունելի լուծում մը կարելի չըր եղած գտնել, քաղաքի իրաւատէր երեք յարանուանութիւններէն երկութը, լատին պատրիարքանը ու յունաց պատրիարքարանը, առանձինն, ամէն մէկը իր հաշոյն լծուեր էին Երուսաղէմի եւ սրբատեղեաց ամրողջական իրաւասութեան տիրանալու մարմաջին, անջուշո օգտուելով քաղաքական խառնակ կացութենէն, բոլորովին անտեսելով հայոց պատրիարքութեան համահաւասար իրաւասութիւնները: Լատին պատրիարքութեան անունով եւ «Առուր Տեղեաց պաշտպանութեան համար» խորագրով, ֆրանսերէն թղթակցութիւն մը կը հրապարակուէր Վատիկանէն 1948 յունիս թուակիր (48. ՍԻՌ. 234), ուր Երուսաղէմի լատին պատրիարքարանը կը պահանջէր որ Ս. Տեղեաց հոգատարութիւնը իրեն յանձնուէր ներկայ քաղաքական աննպաստ պայմաններուն բերումով, նկատի ունենալով լատիններու Պաղեստին գտնուիլ մժդ դարէն ի վեր: Որպէս անմիջական հակադեցութիւն եւ պատասխան, նման յաւակնոտ գրութիւն մըն ալ երեցած էր յոյն պատրիարքութեան անունով՝ «Պայքար լատինաց եւ օրթոսոքս-

ներու միջեւ Ս. Տեղեաց նկատմամբ» վերնագրով, դարձեալ ֆրանսերէն (ԱՆԴ 235). որուն մէջ յունաց պատրիարքը վէճ կը յարուցանէր լատիններու այդ տարօրինակ դիբաւորման դէմ, առարկելով որ յոյն կրօնաւորներ Պաղեստին գտնուած էին Դ դարէն ի վեր ու կը կոչուէին «Ս. Գերեզմանի բիւզանդական եղբայրութիւն»: Իր կարգին յոյն պատրիարքը հիմուելով իր ըսածին վրայ, կը պահանջէր որ Ս. Տեղեաց ըլաշտպանութիւնն ու Երուսաղէմի հոգատարութիւնը յոյներուն յանձնուէր: Ինքնահարայալ վէճին առիթով հայոց Կիւրեղ Բ. պատրիարքը պատշաճ եւ անդորր գրութեամբ մը հանդէս եկած է (ԱՆԴ 235-236), ուր ցաւ յայտնած է թէ «Երբ Ս. Երկիրն ու Սրբատեղինները տակաւին կրակի եւ աւերումի սպառնալիքին ենթակայ են», այսքան անտեղի եւ տարօրինակ հարց մը մէջտեղ կը դրուիր: յորդուելով որ Հրատապ հարցը սրբատեղիններու պահանութեան հարցն էր եւ ոչ թէ միայն մէկու մը կամ միւսին ենթարկուիլը: Հետեւով իսկոյն որ սրբատեղինները իրենց ընույթով «Համաշխարհային են», հիմուած պատմական դարաւոր տուեալներու վրայ, որոնք ընդունուած եւ հաստատուած էին երեք իրաւական անութեան կողմէ: Կիւրեղ կը յորդուիր որ «արդարութեան եւ եղբայրութեան ողին» դառնար ներշնչի ուժը քան թէ անհիմն պատճառաբանութիւնները: Ան յոյն կը յայտնէր որ Պաղեստինի նոր սահմանադրութիւնը իր ուշքը պիտի զարձնէր Երուսաղէմի եւ սրբատեղիններուն վրայ, յարգելով անոնց պատմական եւ հոգեւոր արժէններու ամբողջականութիւնը: Հումկ ու բեմ, ինք եւս կը մէջբերէր հայ եկեղեցւոյ Երուսաղէմի մէջ ներկայութեան պատմականութիւնը «Քրիստոնէութեան առաջին դարերէն» սկսեալ շեշտելով որ «այս կէտին մէջ ոչ մէկ եկեղեցի կրնայ զայն (Հայ եկեղեցին) գերազանցել»: Ինքնապստահ իր խօսքերով հայոց պատրիարքը կը հաստատէր թէ «ոչ ոք կրնայ ժիմել այս ճշմարտութիւնը, եւ մենք եւս ներկային չենք ուզեր մեր պահանջներուն ուժ տալու նպատակաւ յարուցանել այդպիսի խնդիր մը»: Իր գրութիւնը կը փակէր հրաւիրելով բոլորը միանաբար ուխտելու եւ աղօթելու որպէս կարենային երաշխաւորել Ս. Երկիրն անդորրութիւնն ու ապահովութիւնը: Սկզբնական անհիմն լատին եւ յոյն սոյն յայտարարութիւնները անարձագանդ մնացին եւ հետեւաբար նաեւ անարժէք ու ապարդիւն:

Տ. Տ. ՎԱԶԳԻՆ և ՊԱԼՁԵԱՆ

3607. ՎԱԶԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՌԱՋԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆՆԵԼ

Վազգին Ա. իր գահալութենէն միայն չինք ամիս ետք իր առաջին ուղեւորութեան կը ձեռնարկէր զէպի Եւրոպա եւ Միջին Արևելք, ցոյց տալով իր պատասխանատու պաշտօնին Հանդէպ յատուկ նախանձախնդրութիւնն ու Հոգածութիւնը: Ան չերմօրէն կը փափաքէր մօտէն ծանօթանալ սփիւռքահայութեան թեմական ու եկեղեցական կեանքին, յատկապիս նուրապետական աթոռներէն երկուքին Անթիլիասի Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան, մանաւանդ որ կարեւոր առիթ մը կը ներկայանար, պատժական եւ անսախընթաց միանգամայն, ամենայն Հայոց կաթողիկոսին մասնակցելու Անթիլիասի մէջ 1956 փետրուար 14ին կայանալիք Կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութեան, որուն համար արդէն Մայր Աթոռ հրաւէր ստացեր էր Կիլիկիոյ կաթողիկոսութեան տեղապահ Խորէն եպիսկոպոս Բարոյեանչ: Ուղեւորութեան նպատակներէն մին էր նաեւ Մայր Աթոռին համար նիւթական միջոցներ պահովել, «ի մտի ունենարկ վերանորոգումը մը մեր կարգ մը հնադարեան սրբութիւններ հանդիսացող վանքերու» (Ա. ՈՒՂ. 13): Իր երեք ամիս եւ երկու շաբաթ տեսող երկարատեւ ուղեւորութիւնը սակայն պիտի չսահմանափակուէր միայն Կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութեամբ եւ օծմամբ, որ անշուշտ գլխաւոր ձեռնարկը պիտի ըլլար կաթողիկոսին, այլ ան պիտի տարածուէր, ըստ կանխօրօք պատրաստուած ծրագրի, եւ րոպական շարք մը Հայաշտ կեղրուններու այցելութեանց, ինչպէս նաեւ եպիսկոպոսական ժողովի մը գումարման վրայ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքէն ներս: Վազգին Ա. փետրուար 1ին հրաժեշտ կառնէր Մայր Աթոռին ու Մոսկուա կը մեկնէր, ուր մի քանի օր մնալի ետք, 10ին կը հանմէր Փարիզ ու կը դիմաւորուէր Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ Սերովէ եպիսկոպոս Մանուկեանի գլխաւորութեամբ ողակայան եկող խուռն բազմութեան կողմէ: Հայրապետական չքախումբի անդամներն էին Վարդան եպիսկոպոս Տէր Սահակեան, փրոփ. Առաքել Առաքելեան, դիւնապետ Հայկ Առաքելեան եւ գաւազնակիր Պարգեւ արեղայ Գէորգեան: Օղակայանի պաշտօնական ընդունելութենչն ետք, վեհափառ կաթողիկոսը, որ առաջին անգամն էր որ կայցելիք Ֆրանսա, զինք դիմաւորողներու առաջնորդութեամբ կը հաս-

նէր Հայոց Ա. Յովհաննէս Մկրտիչ մայր եկեղեցին ուր խոռներամ ժողովուրդին կուղղէր իր անդրանիկ պատզամբ: Յաջորդ օր պաշտօնական հիւրասիրութենէ մը ետք երկու օրուան կարճ այցելութենէն ետք կաթողիկոսը փետրուար 12ի կիրակի առաւոտ կը ժամանէր Պէյրութ իր շքախումբով որուն մաս կը կազմէր նաեւ Սերովէ եպիսկոպոս Մանուկեան: Բազմահազար ժողովուրդ անախընթաց խանդապահ պառութեամբ կը դիմաւորէն ամենայն Հայոց կաթողիկոսը, որ պատժութեան մէջ առաջին անգամ ըլլարվ Լիբանան մուտք կը գործէր եւ հիւրը կը լլար Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսութեան: Օղանաւէն դուրս կուգար Հայրապետը տեղապահ Խորէն եպիսկոպոսի առաջնորդութեամբ, եւ իսկոյն Կօրչնէր իրեն մատուցուած Հացն ու աղը զորս ափսէի մը վրայ կը կիր Զաւէն աբեղայ Արզումանեան: Պետական անձինք յանուն Լիբանանի Հանրապետութեան նախագահ Գամիլ Շամունի. ներկայ էին դիմաւորութեան: Օղակայան ներկայ էին նաեւ արքեպիսկոպոսներ Եղիշէ Տէրոտիքան Տիրան Ներսոյեան, եպիսկոպոսներ Զարի Փայասլեան, Դերենիկ Փոլատեան, Կեւող Զէպէեան, Շաւարչ Գույումենեան, վարդապետներ, միարաններ եւ բազմաթիւ քահանայ Հայրէր: Ամենայն Հայոց կաթողիկոսը Հանրապետութեան նախագահի ինքնաշարժութեամբ ուստիկանական չոկատի առաջնորդութեամբ, երեք հազարէ աւելի ինքնաշարժերու չերպիվ ու խելայեղ ծափողջոյններով կը յառաջնար Պէյրութի օղանաւակայանէն զէպի Անթիլիաս, ուր կը հանմէր ժամ մը ետք, կը դիմաւորուէր նախկին տեղապահ Խաղ արքեպիսկոպոս Աջապահեանէ եւ Փառէն եպիսկոպոս Մելքոնեանէ, ուխտի աղօթքը կը մատուցանէր Ա. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, կուղղէր իր ողջոյնի խօսքը ու կը բարձրանար վեհարան: Յաջորդող շաբաթը պիտի ըլլար ինձողեալ յայտագիրներու, ժողովներու եւ պաշտօնական այցելութեանց զբաղ շաբաթ մը, ու Վազգին Ա. Հետեւողական քայլերով երկու օր ետք փետրուար 14ին կայանալիք Կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութեան համար բարուք ելք մը որոնելու ուղին պիտի ջանար գտնել իր շուրջ գտնուող Կիլիկեան եւ էջմիածնական եպիսկոպոսներու աղակցութեամբ: Աւելի ուշ Անթիլիաս կը ժամանէին նաեւ Կ. Պոլսոյ Հայոց պատրիարք Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրեան, ամերիկահայ թեմի առաջնորդ Մամրէ արքեպիսկոպոս Գալֆայեան, եւ Գալիֆորնիոյ թեմի առաջնորդ Շուրջ Ենորհք եպիսկոպոս Գալուստեան:

ԴՈԿ. Հ. ԶԱԻԷՆ ԱՐՁՈՒՄԱՆԵԱ

«Ազգապատում» Դ. Հատոր Գ. Գիրք